


891.99

4-29

NOV 2011

391.342-3
4-129



ВОЛШЕВСКИЙ

ВОЗВРАТИТЕ КНИГУ НЕ ПОЗДНЕ

обозначенного здесь срока

24 5/11-23

891.39
Ч-29
ЧИГИ-ЧИГИЧ
иц.



ԿԵԱՆՔԻ ԶՈՒԹՎԱԿԸ

1001
5083
6

21.05.2013

33387

ԿԵԱՆՔԻ ԶՈՒԹԱԿԸ

Տպ. «ՈՒ.ՕՎ.Օ», Գլմնագիշեսկայեան, № 1
Թ. Խ. Յ. Ա. Խ. Զ.
1917

Սալարեանը արքունական ծառայութեան բաւական խո-
շոր պաշտօնեայ էր:

Նոր էր վերադարձել նա մի պաշտօնական ժողովից, —
գիշերւայ ժամը տասն էր:

Ամուրի, անհիւրընկալ և մենաւոր բնակարանը աղմը-
կում էր մօտակայ սենեակից լսող կիթառի. և երգեցողու-
թեան ձայներից:

Սալարեանի խաղաղ և անվրդով կեանքին անսովոր
էին այդպիսի ուրախ և աղմկալից ձայներ:

Ներս մտաւ աղախինը, բերելով հետը ընթրիք,
— Ովքե՞ր են այդ, — դարձաւ նա աղախնին, զարմացած
դէմքով:

— Տանտիրուհին ձեր կողքի սենեակը այսօր վարձով
տւեց մի առև տիկնոջ, — նորա մօտ հիւրեր են եկել, ուրա-
խանում են:

Ի՞նչպէս շուտ, — անցաւ Սալարեանի մտքով: Նա տասը
տարի ահա ապրում է այդ երկու սենեակում և ոչ մի ան-
գամ իր մօտը հիւր չի ունեցել, իսկ տիկինը տեղափոխել
է թէ չէ; արդէն հետը բերիլ է հիւրեր և ուրախութիւն:

Աղախինը գրեց մատուցարանը սեղանի վրայ և հեռացաւ:

Կողքի սենետկից շարուակւում էր լսել կիթառի մելոդի հնչւները և իրեմն ընդհատող ուրախ խօսակցութիւնը և ծիծաղը:

Սալարեանը հստաւ սեղանի մօտ, բայց ախորժակը չէր տալիս ռատելու: Նա նայեց իր շուրջը և աչքին հանգիպեց պատից կախ արած երկու մեծ պատկերները, — ու իր մեռուծ ծնողների պատկերներն էին: Սեղանի վրայ, նոցատակը դրւած էին մի քանի զրջանակներ, — դոքա նոյնպէս մեռուծ մարդկանց էին յիշեցնում: Պատկերներից մեկը իր գեռատի մեռուծ քոյրն էր, իսկ երկուսը եղբայրների, որոնցից մեկը մեռաւ ուսանող ժամանակը, իսկ միւսը զիմնազիայի վերջին դասարանում եղած ժամանակի ինքը իր ծնողների մեծ որդին էր, երբ աւարտեց համալսարանը և վերադառնաւ հայրենիք, արդէն իսկ ամայացած զտաւ իր հայրենական տունը: Մի տարուժ մեռան նրա հայրն և մայրը:

Զարմանալի է, մի ինչ որ մահւան փոթորիկ անցաւ կարճ ժամանակում այդ գժբաղդ տան վրայով: Վերջինը — քոյրը վախճանւեց թոքախտից, ամուսնութիւնից մի տարի յիտոյ:

Պատիկների մահը սուր յիշողութիւններ թողին Սալարեանի մէջ, և շատ անզամ, նոցա յիշելով, երեխայի նման արտաւում էր նա, բայց տարիներ անցան և ամեն ինչ հարթեց, և հեռաւոր անցեալում երևացող պատկերները այլ ևս ուժեղ կերպով չէին յուզում, շարժում նրան: Բայց այսօր իր հարազատների պատկերները, կարծես կենդանի գուրս էին գալիս իրանց ժամանակից խունացած և փոշուած շըրջանակի միջից:

Երկար տարիներ պաշտօններով թափառելուց յիտոյ

արդէն բաւական հասակն առած, Սալարեանը պաշտօնով տեղափոխւց իր հայրենի քաղաքը:

Սալարեանը վերաբնակւեց իր ժառանգական հօր տունը, ուր գեր մնացել էին իր մանկութեան բոլոր վկաները — յիշատակները՝ կահկարասին: Բնակարանը վաղուց, ի հարկէ, վարձով էր տրւած, բայց երկու մեծ սենետկները յատկացրած էին հօր տնից մնացած կահկարասիների համար: Սենետկները բերնէրերան լցւած էին և կողպած: Երկար տարիների փոշին հաստ շերտով նստած էր նոցա վրայ: Իրեղէն ների մեծ մասն էլ դարւած էր ամբարում: Ամեն ինչից երեսում էր, որ ժամանակին այդտեղ բնակւել է Սալարեանների մեծ օջախը, որից այժմ ոչ մի կենդանի յետք չէր մընացել, բացի քայլքայլած և արդէն ծերացած միակ ժառանգից և զառաւիղից — Սալարեանից:

Ամայացած օջախի միակ երերուն ստերը...

Անհրաժեշտ իրերը դասաւարելով իրեն յարմար երկու սենետկում, բնակարանի մնացած սենետկները նա ըրէնով էր տւել մի բազմանդամ ընտանիքի, որոնց մօտ և ինքը կերակրուում էր, որոնք և ինամուռ էին նորան, պահպաններով և ինայելով նրա թոյլ, նւազ առողջութիւնը:

Վտիա, նիհար և ոսկրու էր Սալարեանի մարմինը: Նըրա մագաղաթի նման խունացած և մաշւած դէմքը արտայայտում էր յոզնածութիւն և փիղիքական ու հոգեկան խորը սպառում:

Ժամանակից առաջ նա ծերացած էր ու հիւծւած:

Ի բնէ թուլակազմ լինելով Սալարեանը, տարիների անինամ և մենակ կեանքը նրա ամրող էութեան և մարմնի վրայ դրել էր իր խորը ակօսների հետքերը:

Խորշումած դէմքը, խորն ընկած մարած աչքերը, սկացած տղեղ ատամները և վտիա ու ածիււած դէմքի երկու

կողմում դուրս ցցւած գեղնած մագաղաթի կտորների նը-
ման ականջները, ճաղատ, վարունգինման դուրս ցցւած գը-
լուխը նայողի վրայ եթէ ոչ միայն զգւանք, բայց գոնէ
միշտ խղճահարութեան և կարեկցութեան զգացմունք էին յա-
րուցանում:

Նայելով այդ մաշւած, հիւծւած, ոսկրացած և ձմլած
մարդու վրայ, դուք ակամայից համոզւում էիք, որ կեանքը
այդ մարդուն երբէք չի ժպտացել:

Պաշտօնի մէջ, իրաւ է, նա թէն առանձին յառաջաղի-
մութիւն չէր անում, բայց զնորհիւ իր ճշտապահութեան և
բարեխղճութեան, բաւական աշքի ընկնող դիրք էր գրաւել,
և դա նրա ասպարէզի վերջին կայանն էր, այլևս նա բար-
ձրանալու, առաջապիմելու յոյս չունէր, և ցանկութիւն էլ
չունէր: Կատարում էր իր պաշտօնը ոռվարած, հարթւած շար-
լոնով-- մեքենայօրէն: Նոյն մեքենայական վերաբերմունքը
արտայայտւում էր նորա մէջ և դէպի ամեն ինչը--իր կեան-
քը:

Տասը տարի ապրելով իր մայրենի քաղաքում, բացի
իր պաշտօնատեղից, պաշտօնական այցելութիւններից և իր
բնակարանից, նա ուրիշ տեղ չէր յաճախում կամովին:

Կեանքը այդ մարդու համար գառել էր պարզ թւա-
համար, և այդ թւահամարը նա կրկնում էր ամեն օր, ամ-
սէ--ամիս, տարւէ--տարի:

Ոչ մի ձգտում, ոչ մի ցանկութիւն կամ իդ չէր ծա-
գում այս ոսկրացած վանդակի մէջ: Ամեն ինչ, ըստ երևոյ-
թին, մեսած, մարած էր նրա մէջը:

Եւ այդ գիշեր, երբ նա տուն վերադարձաւ, տեսնելով
իր սովորական կեանքի մթնոլորդը աղմկւած, իսկոյն ընկաւ
անհանգիստ վիճակի մէջ, կորցրեց ախորժակը և չէր իմա-
նում, թէ ինչ վերաբերմունք ցոյց տայ իր անսովոր դրա-

ցոնու վարմունքին, որ գիշերւայ այդ պահուն եկել էր վըր-
դովիլու նորա սովորական անդորրութիւնը:

Յալարեանը դուրս եկաւ սենեակից, մեքենայօրէն մօ-
տեցաւ տանտիրունու դուանը, որ ասի, թէ կողքի սենեա-
կի աղմուկը իրա հանգիստը վրդովում է, բայց կանգ առաւ
մի բոպէ մտածողութեան մէջ ընկաւ և ապա գառնալով դէ-
պի բակը դուրս եկող պատշգամքի միւս կողմը, կանգնեց իր
նոր զբացունու պատուհանի առաջ:

Լուսամուտի թափանցիկ վարագոյրի յետեկից նա նը-
կատեց իր դրացունուն եւ նորա հիւրերին, որոնք նոտած
կիթառ ածողի շուրջը լսում էին նորա մելօդիկ նւագածու-
թիւնը:

Նոր դրացունին փարթամ մարթով, լիքը ուսկրով և
իրանով մի կին էր, նորա պրօֆիլ դէմքից նկատելի էր, որ
գեղեցիկ էր և գրաւիչ: Հագած ունէր նա շրջազգեստ--կա-
պօտ, և լիքը թեկրը բաց էին արմունկներից վերև, բաց էր
և նրա լիքը և փափուկ վիզը մինչև ուսերի կէսը:

Յալախեանը անզգալապէս մօտեցաւ աւելի մօտ լու-
սամուտին և հետաքրքրութեամբ սկսեց նայել իր դրացու-
նուն: Տիկինը նստած էր աթոռի վրայ և փարթամ ու լիքը
ազգրը գրգոռող տեսքով ու ուսուցւածքով բարձրանում էր
միւս ոտի ծնկան վրայ:

Յալարեանի աչքերը փայլ ստացան և մարւած բիբե-
րը անսովոր կերպով ցոլացին, ինչպէս պապղուն կոճակներ:
Նոցա մէջ սկսեց ինչ որ կենանի խաղ:

—Որքան գեղեցիկ է, —անցաւ նորա մտքով: Մի անգամ
ևս նայեց նա գեղեցիկ կնոջը, ապա նորա աչքերը նայեցին,
գիպան իր ոսկրացած, կմախքացած ձեռքերին: Մի ինչ որ
ծանրը, թախծոտ զգացմունք համակեց նորա սիրտը և առաջ
կոյն, գաղտագողի, շնչասպառ անցաւ իր սենեակը և արագ

մօտենալով հայելուն, սկսեց ուշի ուշով նայել իր վրան:

Հայելին անողոք ճշտութեամբ ցոլացրեց նրա այլանդակ պատկերը: Սալարեանը բացեց, կարծես, սողացրեց իր պունդները և սե, գեղնած, մաշւած տտամները դաժան կերպով դուրս ցցւեցան:

Սալարեանը ցնցւեց: — Ես կը մաքրեմ տտամներս, — անցաւ նորա մտքով և խսկոյն մօտեցաւ լւացարանին: Լարւած ուշադրութեամբ և անհանգիստ զգացմունքով կողքի սեղանի վրայ շարեց տտամնափոշու, անգործազրութիւնից արդէն փոշուած, արկղիկը, տտամի խոզանակը և մի բաժակ մաքուր ջուր: Ապա վերցրեց ձեռքը հոտաւէտ սապոնը և սկսեց լւացւել, — սապոնը արագութեամբ սահում էր շըփւող ձեռքերում: Սառը ջուրը մաքրեց, թարմացրեց նորա խունացած և թառամած դէմքը: Երեսը լւանալուց յետոյ, վերցրեց տտամնափոշու մէջ թաթախած թաց խոզանակը և սկսեց ամուր և արագ-արագ քսել գեղնած և սեացած տտամներին:

Տտամները փայլեցին:

Տտամները լւանալուց յետոյ, նորից սառը ջրով բռահարեց երեսը և ապա մաքուր, կզրոցից նոր հանած սրբիչով ցամաքացրեց երեսը, ականջները, որոնք թրջւած թղթի նըման յուրուել, կախւել էին: Մերկ, ճաղատ գլխի շուրջը տըգեղ կերպով կախւելուած էին իիտ և ուղիղ կանդնած մազերը: Սալարեանը վերցրեց սանրը, կարգի բերեց իր անկանոն ցցւած մազերը, ապա օդիկօլօնով թարմացրեց իր ճաղատ գլուխը:

Թեթև ուրախութեան ժպիտը անցաւ նորա դէմքով:

— Վաղը կերթամ բազնիս, — մտածում էր նա, — լաւ կը լւացւեմ, կը մաքրեմ, կը հագնեմ նոր շորերս և կանցնեմ զբացուես պատուհանի մօտով, նա ինձ կը տիսնի և կը նկատի:

Յուսոյ մի նշոյլ անցաւ այդ մարդու խաւարած հոգու միջով:

Այդպէս մտածելով սալարեանը վաղւայ մասին, կամաց և մատների ծայրերով դուրս սողաց պատշամբը և անշշուկ, մատների ծայրերով մօտեցաւ զրացունու պատուհանին:

Նա նկատեց, որ հիւրերը պատրաստում են տուն գընալու: Դրացունին կանգնած էր մի փոքր ինչ թեքւած և մի ձեռքով կոթնած կողքին: Հաստ, գեր և հետզհետէ դէպի վերև լցւող ազդրը ուժեղ և ուռած խոշորութեամբ դուրս էր տւել բարակ և փափուկ կապօտի տակից: Խոշոր և բարձր կուրծքը նկատելի բարձրանում էր և իջնում նորա շնչի տակ, իսկ կզակին թեթև դրած ձեռքը յուզիչ մերկութեամբ բաց էր արել նորա հոլանի թեր մինչև ուսը:

Սալարեանը աննկատնի գլուխը մօտեցրեց պատուհանին և ճակատը կպաւ ապակուն: Սառը ապակին ուշքի բերեց նորա տաքացած գլուխը:

— Ախ, մրգան գեղեցիկ է, — անցաւ նորա մտքով, յառած աչքերով նայելով կնոջ բաց թերին:

Սալարեանի աչքերը, ինչպէս լուսնի շողքի տակ ընկած ապակու կտորներ, սկսեցին պսպղալ մթութեան մէջ:

— Երանի մի անգամ գրկեմ և համբուրեմ այդ փափուկ, բաց թերը, մերկ ուսերը և ես բոլորովին կառողջանամ, կը կազդուրեւմ, անցաւ դարձեալ նորա յանցաւոր մտքով և նորա թուլացած ջղերը, կարծես, ամբացան, լցւեցին:

Բայց հէնց որ աչքը նորից ընկնում էր իր սոկրացած ձեռներին, սկսում էր դողդողալ և ինչ որ տխուր ու թախծուտ ստւեր իջնել նորա խորշումած և ճմլւած դէմքի վրայով:

Սալարեանը ստւերի նման անյայտացաւ պատուհանի առաջից:

Հիւրերը գնացին, սենեակը խաղաղւեց, ամեն ինչ լոեց:

Սալարեանը մտաւ սենեակը, հանւեց և պառկեց քնելու:
Քունը չէր գալիս, հազիւ լսելի խշխոցը, որ գալիս էր կող-
քի սենեակից ամուր փակւած դոնովը, շարժում էր նրա
յոգնած, լարւած ջղերը և յուղում: Ահա նա էլ հանւում է,
մտածում էր նա,—և, իրաւ, կիւղմիլա իվանովան հանեց իր
թափանցիկ կապօտը, բացւեց նորա լայն, լիքը ու առողջ
կուրծքը, ամբողջովին մերկ թերեն և ուսերը: Նա կիսա-
մերկ էր՝ թափանցիկ, բարակ սպիտակ շապիկը քողի նման
կանոնաւոր և հուժկու ազդը բռով իջնում էր ներքե, ծնկնե-
րից քիչ ցած: Եւ ահա մազերն էլ արձակեցան, և խիտ հիւ-
սերով թափւեցան փափուկ ու գեր ուսերի վրայ:

Սալարեանը, կարծես, ինստինկտաբար զգում էր այն,
ինչ որ կատարւում էր պատի միւս կողմը և մեզկ թուլու-
թեամբ և ախորժելի զգացմունքով լցում էր նորա ցամաքած
մարմինը: Նորա երեակայութիւնը այնքան վառում, բոր-
բորւմ էր, որ ահա, կարծես, պարզ տեսնում էր գեղեցիկ
և ախորժելի կնոջը իր առաջ, իսկ ինքը պատրաստ է թեր-
ը տարածել և փաթաթւել գեր և հոլանի կնոջ մարմնով,
ամուր սեղմել իր ոսկրացած և ցամաքած մարմին:

Սալարեանը կծկեց և զլուխը պատին դէմ արած շն-
չասպառ սկսեց լոել ամեն մի թեթե ձայն, շշուկ: Նորա դէմ-
քը պարզել էր, մագաղաթագոյն ականջները գունատ վար-
դի գոյն էին ստացել, սիրտը տրագ բարախում էր, ձեռնե-
րն ու ոտները դողում էին հազիւ նկատելի ու մանր շար-
ժումով:

Սալարեանը յանկարծ նայեց պատից քաշ արած իր ծը-
նողների մեծադիր պատկերներին, որոնք, կարծես, նախատա-
կան հայեացքով նայում էիմ մահճակալի վրայ կուչ եկած
իրենց որդու վրայ: Կարծես, այդ անշունչ, հնութիւնից գու-
նատւած, իւղաներկ պատկերները իւանգարում էին նորա

մինակութեան մէջ ապիող երազներին,— նա արակ
գլուխը բարձրացրեց և հանգնելով մահճակալի մօտ սեղա-
նի վրայ դրած վառ ձրագը, աւելի արագութեամբ կուչ ե-
կաւ, կծկեց վերմակի տակ:

Կողքի սենեակում լսեց ինչ որ թրխկոց: Սալարեանը
ցնցւեց և ամբողջավին լսողութիւն դառած, ականջները լա-
րեց գէտի մահճակալի կողքին մի հնամաշ զորգով ծածկւած
գուռը:

Չրխկոցը կրկնեց: Սալարեանը նորից ցնցւեց և ծուն-
կի գալով, գլուխը մօտեցրեց խալիչային: Երկար նա այգ-
պէս լսողութիւն դառած, մնացել էր արձանացած, բայց կող-
քի սենեակի խորը լսութիւնը թաղւեց, կորաւ շրջապատող
խաւարի մէջ:

Մինջեռ միւս սենեակում գեղեցկուհին կիսաբաց, լայն
և առողջ ազդքերը անփոյթ կերպով ձգւած մուշ-մուշ էր:

Անցան մի քանի այլ ևս ծանր, արճճի պէս, Սալար-
եանի սրտին նստած, ըոպէներ,— նա անշարժ իր դիրքում
լսում էր, բայց այլևս ոչ մի ձայն, շշուկ, չէր գալիս նորա
ականջին:

Ռոպէներ անցնում, սահում էին, նա լարւած լսում էր
դեռ ամբողջովին լսողութիւն դառած, երբ յանկարծ նորա
սկրացած, կմախք դարձած գանկի մէջ անցաւ մի յանցա-
ւոր և յանդուկն միտք:

Պոկել, քաշել, հանել խալիչան և բանալ գուռը: Այդ
միտքը ուժգնօրէն սկսեց յուղել, տանջել նորան: Սալարեա-
նի սիրտը աւելի ուժգին և փոթորկոտ արագութեամբ ըս-
կսեց բարախել և ամբողջ մարմնովը սկսեց անցնել մի ջղա-
յին տեսնդոտ գող: Նա արագ բարձրացաւ մահճակալի վրայ
և երբ ձեռքը մեկնեց, որ քաշի, պոկէ խալիչան, ուժասպառ
ընկաւ մահճակալի վրայ և ծանր ու ճնշող շնչառութիւնը

բոնեց, համակեց նորա ներսը: Սառը քրտինքը դուրս տւեց նորա ճակատը և նու գաղտագողի, կարծես, թագնւելով մէջ կից, անշղուկ և կամացուկ փաթաթւեց վերմակի մէջ և կամաց-կամաց սկսեց ուշքի գալ և հանգստանալ:

—Աստւած իմ, մրբան լաւ եղաւ, որ չարի... անցաւ նորա մտքովը և ապա համարեա շշուկով արտասանեց այդ բառերը, բայց իսկոյն մի ուժգին վախ համակեց նորան, և նա նոյնիսկ համարձակ մտածել անդամ իր մտադրութեան համար երկիւղ զգաց և աւելի խորը, աւելի ամուր կծկւեց իր վերմակի տակ, իսկ երբ համողւեց, որ իրաւ ինքը ի կատար չի ածել իր ցանկութիւնը, սաստիկ ուրախացաւ և ազատ շունչ քաշեց:

Նորը գիշերից արդէն անցել էր, կողքի սենեակից սուր և շաշող հնչիւնով հին, ժամանակից թուլացած, պատի ժամացոյցը տւեց իր զարկերը, որոնք մթութեան և խաւարի մէջ կարծես սուզեցին, մարեցան և կորան:

Եւ նորա նիհար ու վտիտ մարմինը հապիւ լոելի նւազ շնչի ու անհանգիստ ջղաձկութիւնների տակ կամաց-կամաց սկսեց հանգստանալ ու իր յանցաւոր մտքերով մտնել քնի գիրկը:

Իսկ գեղեցկուհին լամպարի թոյլ ու պլացող լոյսի երերուն ստեղների տակ յանցաւոր մերկութեամբ մէջքի վրայ ձգւած մահճակալին, ուժգին ու առողջ շնչով օրօրւում էր իր սուկի և ցնորամիտ երազների մէջ:

Եւ յանցաւոր շունչերը ստւերների նման անցնում էին այդ երկու, — արգաւանդ ինչպէս հող և չորացած ու հիւծւած, ինչպէս հիւանդու ու ծերացած ծառը — կեանքերու շուրջը:

Գիշերը լուսանում էր և բերում էր իր հետ վարանու, բայց նոր ծագող ու շողշողուն լուսոյ հառագայթներ...

Ժլատ, գծուծ Սալարեանը իր կեանքի մեծագոյն մասը անց էր կացրել անգոյն, միօրինակ և անընդհաա իրան զրկելով: Զը նայելով, որ նա հօրից ստացել էր բաւական խոշոր կարողութիւն, բայց կոպէկը կոպէկի վրայ զնելով, աւելացնում էր իր հարստութիւնը:

Խնայելը իր ձեռք ընկած կոպէկը դարձել էր նորա կեանքի նպատակը, և այն ժամանակ, երբ ուրիշները ապրում էին, վայելում էին կեանքը, նա հրում էր իրանից բոլոր վայելքները, հոգով և սրտով կպած լինելով կոպէկին, որից բաժանելը նա չէր ցանկանում, նոյնիսկ իր առողջութեան գնով:

Եւ այսօր, երբ նորա մաշւած, հիւծւած մարմինը կանգնած էր իր կեանքի չնչին մնացորդի առաջ, նորա մէջ յանկարծ ծագեց մի անզուսպ տենչ, մի անդիմալլերի զգացմունը ապրելու, վայելելու կեանքը: Նա յետ նայեց իր անցած ճանապարհը և զարհուրելով տեսաւ անվերջ աւերակների կոյտեր, անդադրում զրկողութիւնների շարան, ոչ մի գունաւոր շերտ չը կար այդ միօրինակ և միապաղապ անցած կեանքի մէջ, և այնտեղ, որ նա կարող էր նոյն իսկ փշրանքներ ստանալ կեանքից, նա չէր կուանում, չէր ժողովում այդ փշրանքները, վախենալով գրպանից վայր ձգել իր սիրած կոպէկը:

Առաւօտեան վաղ վեր կենալով Սալարեանը կազզուրւած էր զգում իրեն սովորականից աւելի, — նորա սոկորները, կարծես, ամրացել էին և թուլացած ու փխրուն մարմինը կարծին, աւելի ամուր և աւելի սերտ էր կպած նորա կը-

մախքին, թէկ ամբողջ մարմնի մէջ զգում էր մի ինչ որ ա-
խորժ թուլութիւն, յանելի յսդնածութիւն:

Սալարեանը մեծ ախորժակով նախաճաշեց և մի բա-
ժակ թէկ խմելուց յետոյ, գնաց իր պաշտօնատեղին: Պաշ-
տօնատուն մտաւ նա սովորականից աւելի ուրախ արամա-
դրութեան մէջ: Նկատեցին այդ և նորա պաշտօնակիցները
և սորորազբեալները, որոնց վերաբերմամբ նա այդ օրը մեղմ
և բարեհոգի վերաբերմունք ցոյց տևեց, իր սեղանի վրայ
դրած թղթերը առանձին սիրով և ուշազրութեամբ սկսեց
փայփայել և նայել: Կարծես ինչ որ կենարար շունչ էր մտել
նորա ցամաքած ջղերի մէջ և այդ նկատեցին բոլորը:

Петръ Артемьевичъ младдомъ выглядитъ сегодня,
դարձաւ նորան իր պաշտօնակիցներից մէկը ստացկի սո-
վետնիկ Պերեվերդեց:

Да, да, бываетъ со мною иногда... և իսկոյն յիշեց գիշեր-
ւայ գէպքը և կարծես ինքը իրանից ամաչեց և կռանալով
սկսեց սեղանի թղթերը կարգի բերել:

Ժամը երկուսից անց Սալարեանը տանն էր: Լաւ ճա-
շելուց և մի բաժակ գինի խմելուց յետոյ, նա պառկեց հան-
գոտանալու:

Երեկոյեան դէմ Սալարեանը պատրաստեց բաղնիս
գնալու:

Մի անհանգիստ ջիղ էր մտել Սալարեանի ներսը և նո-
րա աչքին ամեն ինչ սկսեց ծուռ և անկանոն երեալ: Մաք-
րութեան վրայ առանձնաապէս սկսեց ուշազրութիւն դարձ-
նել, նա կանչեց աղախնին, դրեց առաջը մի բուրլի արծաթ,
ապշեցնելով միանգամայն աղախնուն իր առատաձեռնու-
թեամբ, պատրիեց անմիջապէս սենեակը մաքրել և իրերը
կարգի բերել մինչև ինքը կը վերապառնար տուն բաղնիսից:
Բաղնիսում Սալարեանը սովորականից աւելի երկար մնաց:

Նոյն իսկ բաղնիս նա տարեկան մի--երկու անգամ էր գը-
նում, որ աւելորդ ծախս չանի: Ճանապարհին նա մտաւ ա-
ռաջնակարգ խանութներից մէկը և գնեց ամենալաւ ուտելե-
ղէններ, մրգեր ու քաղցրաւէնիներ, պատրիերելով տուն ու-
ղարկել: Խանութպանը, որ ճանաչում էր Սալարեանին, իբ-
րև ժամանակակիցները, պարմացաւ նրա առատաձեռնութեան վրայ:
Տանը առաւել ևս զարմացան Սալարեանի անսովոր վար-
մունքի վրայ: Երբ նա տուն եկաւ մաքրած և թարմացած,
ամեն ինչ մաքրած և կարգին զասաւորւած գտաւ սենեա-
կում: Զը բաւականանալով աղախնի արածով ինքը այստեղ-
այնտեղ մի փոշու հետք նկատելով, սկսեց լաթը ձեռքը սըր-
բոտել: Եւ երբ աղախնը նորից մտաւ ներս, Սալարեանը
պատրիերեց ամեն օր սենեակը մաքրել: Մինչ այդ նոյնիսկ
ինքը արգելում էր սենեակը մաքրելու: Ժլատ, զծուծ նրա
բնաւորութեան գծերը նկատելի էր նոյնիսկ իւր սենեակի
անկանոն և փոշուած սարք ու կարգի վրայ:

Կեանքը սահում էր բանալով իր յետեց գեղեցիկ և
ախորժելի պատկերներ, թողնելով նրան իր աղբուած և խուլ
անկիւններից մէկում:

Եւ ահա յանկարծ այդ անծանօթ և մոռացւած կեանքի
գրքից Սալարեանի առաջը բացւեց մի գեղեցիկ ու փայլուն
էջ, որը կարդալու համար բնութիւնը այնքան քիչ ոյժ և
զօրութիւն էր թողել նորա հոգու աշքերի մէջ:

Եւ ահա նա, կարծես, վերջին ճիգը, վերջին ոյժն էր
գործ գնում մոխրի տակը թաղւած, մարելու մօտ կայծերը
նորից տոկայծելու, վառելու համար, և որքան քրքրում էր
նա իր հոգու ներսը, այնքան շատ և շատ գուրս էր տալիս
իր անցեալ երիտասարդ և աւելի առողջ կեանքի վառած,
մոխրի գարձած մնացորդները:

Իսկ որքան ուժեղ, որքան անզուսպ առկայժմում էին

այդ մոխիրների մէջ թաղնւած կայծերը և մթութեան մէջ
յանկալը առկայծող, վառւղ ճրագի նման, նորից հանգչում
էին, մարում:

Նիւթը սպառած էր, կրակը չէր զօրում:

III

Պարզ, լուսնեակ գիշերին Սալարեանը կանգնած էր դէ-
պի բակը դուռ եկող լայն պատշգամբում և նայում էր աստ-
ղալից երկնքին, երբ յանկարծ բացւեցաւ իր գրացուհու դու-
ռը և ամբողջովին սպիտակ հագած անծանօթուհին դուրս
եկաւ պատշգամբ, հետն էլ տանտիրուհին:

—Գիտէք, մենք երեկոները սովորութիւն ունենք պատըշ-
գամբում թէյ խմելու, դարձաւ նրան տանտիրուհին:

—Ահ, զա շատ լաւ է, մանաւանդ այսպիսի հարաւային
հիանալի գիշերներին:

Սալարեանը շատ մօտ էր կանգնած տիկիններին:

—Դուք ծանօթ չէք գեռ: Զեր գրացուհին, դարձաւ տան-
տիրուհին Սալարեանին:

Սալարեանը տատանւեց, ծնկները թուլացան, վարի
ծնօտը սկսեց զողովրդալ և թակարդը ընկած մկան նման
այս ու այն կողմ նայելով, մօտեցաւ տիկնոջը և դողդոջուն
ձեռքը մեկնեց նորան, խորը գլուխ տալով:

—Ես, գիտէք, մենակեաց մարդ եմ: Ներեցէք, ես ձեզ մի
երկու անգամ տեսայ.. բայց.. և լեզուն կապւեց, կծկւեց,
խեղճացաւ և յանցաւորի նման մթաց քարացած տիկնոջ ա-
ռաջը:

Լիւդմիլա Խվանովան, այդպէս էր նորեկի անունը,
թափանցող հայեացը ձգեց Սալարեանի վրայ, սիրալիր մեկ-

նեց ձեռքը և չգիտէր ինչ պատասխանէր, այնքան անսոլ առ-
սելի և անսորդոր էր այդ սմբած, կմախքացած և մուած գէմ-
քով փոքրիկ մարդու երեսալը լուսնի շողքերուն տակ: Սա-
լարեանը կարծես խրտնեցնող մի ստւեր մինէր յանցաւոր
կերպով՝ կանգնած գեղեցիկ կնոջ առաջ:

Լիւդմիլա Խվանովայի ներսը ինչ որ խայթող կերպով
ցաւեցրեց, Սալարեանի այլանդակ, կորացած կերպարանքը
նորա սրտում մի անբացատրելի զգացմունք յարուցեց, խըլ-
ճահարութիւն էր դա, թէ մի տեսակ զգւանք բերող զգաց-
մունք, երբ, օրինակ, տեսնում ես խլէզ, գորտ կամ մողէս:
Մի խօսքով մի ինչ որ սողացող բան, կարծես, անցաւ իր
ձեռքից, բարձրացաւ թեր և ապա անցաւ ամբողջ մարմնովը:
Այդ զգացմունքը այնքան ուժեղացաւ, որ նոյնիսկ զգաց
կարծես, թէ ահա թեի տակը, մէջքի կողմը ինչ որ բան
բարձրացաւ և անհանգստութիւն է պատճառում իրան:

Անախորժ գրութիւնը ընդհաացեց տանտիրուհին:

—Սալարեանը մեր շատ հանգիստ ու սուս բնակիչներից
է, նորա գրացութիւնը ձեղ չի անհանգստացնի, ոչ եկող, ոչ
գնացող ունի, մենակ մարդ է:

—Այս, ես մենակ մարդ եմ, գնում եմ պաշտօնատեղիս և
վերադառնում տուն և տանից շատ հազիր է պատահում, որ
գուրս հմ գալիս և շատ շուտ էլ պառկում եմ քնելու: Այն-
պէս որ կորող էք համարել, համարեա թէ գրացի չունէք:

—Երկի երէկ գիշեր մենք բաւական անհանգստացրինք
ձեզ, չը թողինք քնելու: Երէկ անսպասելի կերպով մօտ հիւ-
րեր ունէի, եկել էին ընկերուհիս և նորա ուսանող նշանա-
ծը, Մուկւացի է օրիորդը, ես էլ Մուկւայից եմ: Իսկ երի-
տասարդը այստեղացի կովկասցի, շատ ուրախ մարդիկ են:
Հետներն էլ մի ուսանողունի, սոյնպէս Մուկւայից եկած, իր

ընկերություն մօտ հիւր: Այսպէս որ աղմուկ շատ արինք և
ձեզ էլ քնել չը ժողինք, երևի:

Ո՞չ, ամենին, ընդհակառակը, ի՞նձ բաւական ախոր-
ժելի էր լսել կիթառի ձայնը և օրիորդի երգը: Ես երաժշտ-
ութիւն շատ իմ սիրում: Այս խօսքերի վրայ մի ինչ որ
գունատ կարմրութիւն անցաւ Սալարեանի երեսովը:

Տանտիրուհին հեռացաւ թէի մասին հոգալու:

— Երևակայեցէք, ես ևս շատ եմ սիրում երաժշտութիւնը,
բայց դժբաղդաբար ոչ մի գործիքի վրայ չեմ նւազում:

Խօսակցութիւնը շարունակւեց և հետպէտէ կենդանի
գոյն էր ստանում:

Լիւդմիլա Իվանովնայի սիրալիք վերաբերմունքը սըր-
տապնդեց Սալարեանին, մէւս կողմից Սալարեանն էլ առա-
ջին իր արած անախորժ տպաւորութիւնը հարթեց և սողու-
նի յիշողութիւնը քիչ-քիչ չքացաւ տիկնոջ ուղեղում, առա-
ջը տեսնելով մի խղճահարութեան արժանի միայն և բոլո-
րովին անվաս ու մեղմ վարւեցողութիւն մարդ:

— Ներեցէք համարձակութեանս, դարձաւ Սալարեանը տիկ-
նոջը, վաղուց է գուշ մեր քաղաքումն էր և արդեօք եկել էք
ընդմիշտ մնալու:

Սալարեանը, որ քաղաքավարի ձեր ունէր և, պէտք է
խոստովանիւ լաւ, գոնէ արտաքին կը թութիւն ունէր ստա-
ցած, այս անգամ ուղղակի գուր եկաւ Լիւդմիլա Իվանով-
նային իր ուշաղիք վերաբերմունքի համար:

— Ինդամենը մի շաբաթ է, մի իւրանոցից ուղղակի այս բը-
նակարանն եմ եկել, և համարեա ոչ մի ծանօթ չունեմ: Ե-
կել եմ այստեղ բաղդ որոնելու, գործ ճարելու, ծիծաղելով
դարձաւ նա:

— Ի՞նչ գործ, հետաքրիք է իմանալ, գուցէ ես ձեղ կա-
րողանամ օգտակար լինել:

— Օ, շատ ուրախ կը լինէի եթէ գուք մի բան անէիք
ինձ համար, ես բոլորովին օտար եմ այստեղ և ոչ ոքին,
ինչպէս ասացի, չեմ ճանաչում, ես կը ցանկայի մի որևէ
ընտանիքում կամ հիմնարկութեան մէջ պաշտօն ունենալ
կարող եմ լինել գաստիարակչունի և ծառայել գրասենեա-
կում: Ունեմ փորձառութիւն և միջնակարգ կրթութեան վը-
կայական: Գիմնազիա եմ աւարտել, զիտեմ ֆրանսերէն և
գերմաներէն լեզուները, որքան անհրաժեշտ է գաստիարակ-
չունու համար:

— Ա, դա շատ լաւ է, ես գուցէ կարողանամ մի բան ա-
նել ձեղ համար:

— Այս, որքան չնորհակալ և երախտապարտ կը լինէի ձեզ:

Տիկնոջ սիրաը լցւեց յուսոյ մի նշոյլով և Սալարեանը
նորա աչքում երեաց մի բարի մարդ, առաջին անախորժ տը-
պաւորութիւնը աւելի հարթւեց, նոր և ախորժելի տպաւո-
րութեան տակ:

Սալարեանը իրաւ ի պաշտօնէ բաւական մեծ կապեր
ունէր, շատ անգամ նորա օգնութեան էին գիմում գործի
վերաբերմամբ զիրք և կարողութիւն ունեցող ժարդիկ մի
որ և է խնդրով, այսպէս որ նա յոյս ունէր տիկնոջ համար
որ և է պաշտօն ճարել իր ծանօթների մօտ:


Տանտիրուհին մօտեցաւ խօսակիցներին և հրաւիրեց
թէյի:

Թէյի սեղանին Սալարեանը աւելի բացւեց և սկսեց
նոյն իսկ հանաքներ անել:

Մի ժամից յետոյ Սալարեանը իր սենեակումն էր ու-
րախ տրամադրութեան տակ:

Լիւդմիլա Իվանովնան նոյնպէս լաւ եւ յուսադրւած
տրամադրութեան տակ մտաւ իր սենեակը:

Նա բարի մարդ է, կրկնում էր նա իր մտքում, նա,



անշաւշտ, մի բան կանի ինձ համար, չէ որ նա յայտնի գիրը ունի քաղաքում... եւ այդ յոյսով նա մտաւ, անկողին:

Սալարեանը գիշերը անկողնում պառկած երկար չէր քնած: Մօտենում էր և ականջ դնում պատի միւս կոմից եկած ամեն մի շուրջին, որը քաղցր ու ախորժ նիրնով էր լցնում նորա թուլացած մարմինը: Երբեմն շոյում էր պատից քաշ արած խալիչան, կարծես, իր շուրջը գըտնւած անշունչ իրերն էլ շունչ էին աւել, նա ամենքին և ամեն ինչը պատրաստ էր շոյել, փաղաքշել, կարծես, իրաքանչիւր նորա կեանքի բոպէն լցւած էր սիրոյ էութեամբ և ապրելու շնչով:

Այդքան քաղցր, այդքան անուշ էր գեղեցկուհու մօտիկ շունչը:

IV

Մի շաբաթից լիւդմիլա իվանովան արդէն պաշտօնի մէջ էր: Սալարեանը նորա համար յայտնի գրասենհակներից մէկում 50 ո, ամսական վարձատրութեամբ պաշտօն էր գտել: Սալարեանի ցոյց տւած աջակցութիւնը աւելի ջերմացրեց նորա և իր զրացուհու յարաբերութիւնները: Տիկինը աւելի մեղմ և փաղաքշալից վերաբերմունք էր ցոյց տալիս դէպի Սալարեանը: Թէև առաջին տպաւորութիւնը թողել էր իր հետքերը, սողունի զգացողութիւնը մնացել էր դու նորա ջերբի վրայ.

Մի անգամ Սալարեանը մտաւ տիկնոջ մօտ երեկոյեան դէմ: Տիկինը նորան սիրով և յարգանքով ընդունեց հիւրասիրեց թէյով:

—Գիտէք, Պիոտր Արտեմիչ, ևս ձեղանից շատ և շատ շը-

նորհակալ եմ, դուք ինձ հանեցիք անելանելի վիճակից, ես այժմ իմ գլուխը գոնէ իմ աշխատանքով կարող եմ պահել:

—Զարժէ, տիկին, ամեն մարդ պէտք է օգնէ կարիք ու նեցողին, իմ արած ծառայութիւնս ձեզ չնչին բան է, չարժէ դորա համար խօսին անգամ:

Որքան բարի մարդ է, անցաւ լիւդմիլա իվանովայի մտքով:

—Ես ամբողջ կեանքս, շարունակեց Սալարեանը, անց եմ կացրել մենակութեան մէջ և, շատ քիչ, համարեա ուրախ օրեր չեմ տեսել, այժմ ձեր բարեկամութիւնը, մանաւանդ գրացիութիւնը իս կեանքի մէջ լոյսի մի շող է մտցնում: Ես կը ցանկայի միշտ ձեզ մի որ և է բանով օգտակար լինել: Գիտէք, տիկին, ևս նիւթականի կարիք չունեմ, շոայլ կեանք չեմ անցկացնում, մօտաւոր ժառանգներ էլ չունեմ, որ նոցա համար խնայեմ կարողութիւնս: Եթէ մի որ և է բանով կարող եմ ձեզ օգնել, ասացէք, առանց քաշւելու, — ես պատրաստ եմ ձեզ օգնելու:

—Լիւդմիլա իվանովայի գործնական ուղեղով իսկոյն անցաւ մի միտք, որ ուժեղ կերպով ընդգրկեց նորան: Ի՞նչ կայ որ, ևս կարող եմ օգտւել սորա կարողութիւնից, մտածեց նա, — չէ որ սորա կարողութիւնը մեռած կապիտալ է՝ ոչ ինքն է օգտում և ոչ ուրիշները, և ինչու ևս չպիտի օգտւեմ, երբ յարմար առիթ է գալիս, բայց..., և նա կանգ առաւ, — զա ինձ կը պարտաւորացնէ և այս զարհութելի ծերուկը թերեւս կաշխատէ ինձ մօտենալ իր փաղաքշանքներով... Ոչինչ, անցաւ մի վճռական թել նորա ուղեղով, — թող որ ինձ հնար և միջոց տայ լաւ ապրելու, ուզած անելու, կարող եմ սորա առաջը փշրանքներ ձգել, թող ժողովէ:

—Եթէ դուք այդքան բարի կը լինէք, կոկնառութեամբ և

ներս թափանցող մեղմ ձայնով, դարձաւ Լիւդմիլա Իվանովան։ Ես համարեա ոչինչ չեմ բերել հետո, մօտենում է աշունը և տաք շոր չունեմ։ Եթէ դուք այդքան սրտացաւ էք, Պիոտրը Արտեմիչ, օգնեցէք ինձ այժմ, երբ ես ունենամ, կը վերադարձնեմ ձեզ։

— Ինչեւ վերադարձնել, սիրով ես ձեզ կօգնեմ, ինչքան ձեզ պէտք լինի։ 200 րուբլի բաւական կը լինի, դարձաւ նա։

Լիւդմիլա Իվանովսան երկու հարիւր րուբլու անունը որ լսեց, ամբողջովին փայլեց։

— Դա չափազանց բաւարար է, նոյնիսկ շատ, կարելի է և պակաս։

— Ոչինչ, թող փոքր ինչ աւելի լինի, միայն թէ լիովին բաւարարի ձեր պէտքերին։

Սալարեանը զողդողալով հանեց ծոցաշիբից բումաժնիկը և գործունեայ հայեացըով և շարժումով բանալով հանեց մէջից երկու հարիւրանոցներ և ապա սուր հայեացըով նայելով տիկնոջ աչքերին, զբեց դիմացը ասելով—համեցէք ինդրեմ։

— Լիւդմիլա Իվանովսան յուսալի ժպիտով ընդունեց երկու հարիւր րուբլին և շնորհակալութիւն յայտնեց։

Անցաւ մի անախորժ լուս վայրկեան, կարծես, կատարեց ինչ որ անհաճոյ տուր և առ, բայց իսկոյն հարթեց և անցաւ այդ զգացմունքը, երբ Սալարեանը վեր կացաւ, մօտեցաւ Լիւդմիլա Իվանովսային, համբուրեց ձեռքը և պատրաստեց մեկնելու։

Լիւդմիլա Իվանովսան չը բռնեց նորան, ցանկալով մենակ մնալ երկու հարիւր րուբլու հետ և ծրագրել ու մտածել իր անելիքների մասին։

— Խնդրեմ յաճախ եկեք ինձ մօտ, առանձին սիրալի-

ութեամբ դարձաւ տիկինը։

— Ուրախ կը լինեմ ձեզ էլ ինձ մօտ տեսնելու։ Խնդրեմ աղատ ժամանակին եկեք ինձ մօտ երեկոյեան թէյի, կը խօսենք ժամանակ կանցկացնենք, ես մենակ մարդ եմ, որը և անօդնական, — ձեր ներկայութիւնը իմ սինեակում կը յիշեցնի իմ կեանքի անցեալ օրերը, երբ ծնողներս կենդանի էին և մեր տանը ամեն օր հարսանիք էր, ուրախութիւն էր։ Սալարեանի երեսով անցաւ ախրութեան մի սաւեր և սըրտիցը մի խոր հասաւ։ Նա մի անգամ էլ մօտեցաւ տիկնոջը և գալանտ կերպով բռնելով նորա փափուկ ձեռքը մօտեցըրեց իր ցամաքած շրթունքերին, համբուրեց և մնաս բարով ասելով հեռացաւ։

— Ան ինչ զգելի էր դորա համբոյրը, կարծես, ձեռքիս կպաւ մի խլէզ, անցաւ տիկնոջ մտքով, և նա իսկոյն գնաց լւացարանի մօտ և լւաց ձեռքերը։

— Մի երկու համբոյր երկու հարիւր րուբլով, բաւական թանգ է, մտածեց Սալարեանը, այն էլ գոնէ փափլիկ այտերը կամ հիւթալի պուշները համբուրած լինէի, էլի մի բան արթէր։

Սալարեանը, իբրև իսկական հայ, համբոյրը իսկոյն դրամի վերածեց։

— Բայց ոչինչ—յետոյ մտածեց—ապագայում նա ինձ կը սիրէ, կը փայփայէ, ես ոչինչ չեմ ինայիլ նորա համար, թէկ մի փոքր ինչ ձեր եմ, հիւծւած, բայց ոչինչ, դա էլ կը հարթւի, կուղղւի, կառողջանամ, կաշխատեմ առանց ինայողութեան ապրել—լաւ ուտել, լաւ խմել, ամենալաւ դինիները կառնեմ, դա ինձ կը կազուրէ, կեանք կը տայ, կը լցւեմ, կը չափանամ, աշխուժութիւն կը գայ վրաս։

Անա այդպիսի յուսատու մտքերի և ձգտումների տակ Սալարեանը մտաւ իր սենեակը։

—իսկ եթէ յանկարծ առաջարկութիւն անէ ինձ այդ
մաշւած, աւերակ գարձած ծերուկը, ի՞նչ անհմ, անցաւ
կիրամիլա իվանովայի մտքով, միթէ դրամի համար ինքս
ինձ պիտի ծախեմ: Եւ նորա երևակայութեան մէջ պատկե-
րացաւ այդ քայլայւած ծերուկը գիշերւայ խալաթով, ի՞նչ-
ու մօտենում է իր առողջ, գեր մարմին և ցամաքած
շրթունքներով ծածկում համբոյրներով: Ես այն ժամանակ
նորա փաղաքանքը մերժելու իրաւունք չունեմ, նորա սե-
փականութիւնն եմ, չէ որ նա իմ ամուսինն է դառնալու:
Իսկ եթէ մերժեմ, հրեմ նորան ինձանից, այն ժամանակ ես
կը զրկեմ հարստութիւնից և գնա ու այն ժամանակ ամ-
բողջ կեանք չարչարւիր ստացած կոպէկներովդ: Զէ, չէ,
աւելի լաւ է մի փոքր զոհաբերութիւն ու լաւ ապրել, քան
ամբողջ կեանքում չարչարւել: Ես պէտք է յաղթեմ իմ զըդ-
ւանքը նորանից, վճարկանապէս ասեց նա ինքն իրան և
ձգւեց ամբողջ իր փարթամ ու տարփոթ մարմնով մահճա-
կալի վրայ:

Ախորժ երազները եկան լրացրին մնացած ցնորքները:

V

Անհոգ, անկարգ և վայրի վերոյ Սալարեանի կեանքը
զգալի կերպով սկսեց կարդաւուել: Սալարեարը սկսեց
ուշք զարձնել իր մոռացւած և զրկւած կեանքի վրայ: Հըս-
կում էր իր սենեակի մաքրութեան վրայ, հագնուում էր
մաքրուր, աւելացրնց իր ապրուստի վարձագինը և
պայմանաւորւեց, որ աւելի ճոխ և աւելի ընտիր սեղան
պատրաստեն իր համար,—յայտնւեցին ճաշւայ սեղանին և
ընտիր գինիներ: Սալարեանը յաճախակի գնում էր բաղնիս,
մաքրում էր, կտրտեց և մաքրեց իր երկար կեղառվ լցւած

եղունգները, խուզել տւեց, կարճացրեց իր վըճնի պէս զլիի
շուրջը կախիխւած մազերը, այնպէս որ ճաղատութիւնը
այնքան դուրս չէր զարնում, —օծուում էր անուշահոտու-
թեամբ, մաքրում էր իր սեացած և մաշւած ատամները,
կնաց նոյն իսկ ատամնաբոյժի մօտ և հիմնաւոր մաքրել
տւեց իր տարիներով լայտտած և շերտաւորած ատամները,
միով բանիւ Սալարեանի կեանքը ընթանում էր բոլորովին
այլ ուղիով—իր կեանքը վայելքների ճանապարհով տանող
ուղիով:

Տնացիները բոլորովին ապշած էին մնացել այդ ժլատ
մարզու ասատածենութեամբ և շուայլութեան հասած
ծախսերի վրայ: Միւս կողմից նկատում էին մտերմական
յարաբերութիւններ իրանց նոր բնտկչունու հետ: Ամուս-
նանալ է ուղում, վճռեցին նոքա վերջապէս:

Եւ իրաւ նոր կեանքը արագ կերպով նորոգեց Սա-
լարեանի խարխլած մարմինը, խորշումած երեսը սկսեց լըց-
ւել, ճակատի խոր ակօսւած կնճիռները հարթւել, դողդո-
ղացող ձեռքերը և ծնկները սկսեցին աւելի հաստատուն
կայունութիւն ստանալ, և ամբողջ քայլայւած մարմնովը,
կարծես, անցաւ մի ինչ որ ժողովող, հաւաքող և ամրա-
պնդող էսերգիա: Ապրելու տեսչը անզուսպ կերպով զարթել
էր նորա մէջ և զօրեղացել:

Սալարեանը չը բաւականացաւ միմիայն իր ստամոքսի
հոգսով, կարել տւեց երկու ձեռք գեղեցիկ և թանգանոց
շորեր, և ամեն օր փոխ առ փոխ հագնելով շարունակ հա-
յելին էր նայում:

—Որքան լաւացել եմ և գեղեցկացել, մխիթարում էր
ինքն իրան, և իրաւ աշխուժութիւնը, կարծես. աւելացրել
էր նորա արտաքին տեսքի մէջ մի քանի գեղեցիկ զծեր,
զարձնելով նորան սիրունիկ ծերուկ:

Սալարեանը բոլորովին նորոգւել փայլ էր ստացել, և ի հարկէ, այդ փոփոխութիւնը չէր կարող չը նկատել և նորա դրացուհին: Նկատում էր մանրամասնութեամբ և հըրձում իր ազգեցութեան վրայ: Հիմա նա իմ բուռն մէջ է, մտածում էր նա և ծրագրում իր ապագայ հարուստ և փարթամ կեանքի մասին:

Ուզում եմ ապրել և ինչու չագրել լաւ և ճոխ և, եթէ հնար կայ, եթէ դու դա վաստակում ես թէկուզ քո մարմնի փաղաքշանքները վաճառելու գնով: Ես հօ անառակ կանանցից չեմ, որ դրամի համար շռայլում է իր սէրը, վաճառքի հանելով իր մարմինը, անմիտ կերպով ծախսելով իր գեղեցկութիւնը, առողջութիւնը,—ես վաճառում եմ, բայց թանգ գնով, իմ բոլոր պահանջներիս բաւարարութեան գնով, տալով միմիայն փշրանքներ: Մ՞վ կը մեղագրի ինձ: Հարմատը, կեանքից լիսցածը, —թող մեղաղըի, —անկարիք և լիսցած կեանքի մէջ հիշտ է մեղաղըել, բայց ինչ կանէին այդ հարուստ կանայք, եթէ մի օր ընկնէին իմ օրը—օտար քաղաքում անօգնական և անդրամ ընկած լինելով: Վերջապէս, միթէ այդ կանայք բոլորն էլ սիրով են ամուսնացել և սիրում են իրանց ամուսիններին և միթէ դուրսը նոցանից շատերը չեն որոնում արգելւած սէրը: Իսկ չքաւորները: Նոքա նախանձով կը նայեն ինձ վրայ և ատելութեամբ կը բամբասին, սրտերի խորերում արդարացնելով ինձ: Բայց ոչ ոք անկեղծ ու համարձակ չի ասիլ ձշմարտութիւնը, որ ես ապրել եմ ցանկանում, առողջ և անկարիք ապրել, ինչպէս առողջ է իմ մարմինը,—դա իմ իրաւունքն է, և ահա իմ ապրուսաը խլում է հէնց այդ գծուժ և ժլատ Սալարեանը, որ ոչ ինքն էր ուսում և ոչ ուրիշներին տալիս:

Եւ ահա ձեզ հասարակական կարծիք, որ անարդարութեան վրայ է հիմնւած: Ուժեղը կը թքի, կանցնի, իսկ թոյլը կը ճնշւի և կընկնի: Բայց ես էլ պիտի թքեմ և անցնեմ այդ բարոյականութեան վրայով, քանի որ ինչքան անարատ և համեստ եղայ, այնքան կեանքը ինձ պիտի քշէ, ձգէ իր խուլ և յետ ընկած անկիւնները:

Միթէ ես վատ և վնասակար ընթացք եմ բռնում: Սալարեանը ունի մեծ կարողութիւն, և իր յիմարութեան, իր ժլատութեան պատճառով նորա կարողութիւնը գառել է մեռած, անգործագրելի կապիտալ, գորա հետ միասին ինքնըն էլ օրէցօր հիւծւում, աննկատելի մեռնում էր: Այժմ ես կարողանում եմ օգտուել այդ կապիտալից, —ինքն էլ է օգտուում, դորա հետ միասին ես տալիս եմ նորան իմ առողջ մարմինը և սիրոյ փշրանքները, նա կենդանացել է, աչքերի մէջ յուսոյ կայծեր են փայլում: Այո, դա զոհաբերութիւն է իս կողմից, քայլքայւած ծերուկի փաղաքշանքների տակը ընկնելել, բայց այն կողմը կշեռքի միւս նժարի վրայ մրգան կինսական բարիքներ է լցւած: Օ՛, այդ ինձ գրաւում է: Իսկ եթէ նա առաջարկութիւն անի ինձ ամուսնալու և պահանջի իմ կեանքը կապել իր կեանքի հետ, Օ՛, դա սարսափելի կը լինի, ուրեմն ես այն ժամանակ իրաւունք շեմ ունենալ սիրելու ուրիշին, դարձեալ նոյն, զրսի հայեացքով: Հիմա ես իրաւունք ունեմ սիրելու մի քանիսին, ամենաշատը ինձ կանւանեն պոռնիկ կին, իսկ եթէ ամուսնանամ և սիրեմ ուրիշէն, ինձ կանւանեն և զաւաճան, և ստոր, և անպատիւ, և շահասէր, և ամեն վատթար ածականները կը կըպցնեն ինձ: Տարօրինակ բան՝ ես ապատ մարդ եմ, հետեապէս ապատ էլ կարող եմ սիրել ում և կամենամ, —մէկին տալ իմ սէրս նիւթական ապահովութեան համար, —միւսին իմ ներքին զգացմունքներիս բաւարարութիւն տալու հա-

մար, Հապալ այդ բարոյախօս հասարակութիւնը հաշտեցնի երկու բնական ու արդարացի պահանջ, ես կուղեմ ամբողջ իմ մարմնիս առողջութեան պահանջներով բաւարարել կեանքըս, ես ցանկանում եմ լաւ, անկարիք, առատ կեանք և առողջ սէր: Եթէ ես գտնեմ այդ երկուսը մէկի մէջ՝ ես ամենաերջանիկ կինը կը լինեմ, իսկ եթէ չը կայ, ես պէտք է բաժանեմ և առնեմ կեանքից այն, ինչ որ նա ինձ տալիս է, առանց ինձ Ճանձի նման խճճելու մարդկանց հնուրած մորալի ցանցերի մէջ:

Լիւզմիլա Իվանովսան, որ մէջքի վրայ ձգւած էր փոքրիկ նեղ սոֆկայի վրայ և մի ոտը յատակին զրած, թեթև և կամաց սկսեց բարձրացնել իր բաց վարդագոյն-կապօտը, ոտի տակից կամաց-կամաց երևացին սպիտակ և փափուկ ազդրերը ծնկներից քիչ բարձր: Լիւզմիլա Իվանովսան նայում էր իր փարթամ և առողջ մարմի վրայ և մտածում:

Ահա թող Սալարեանը մի անգամ ինձ այսպէս տեսնի կը խելագարւի, չէ՞ թէ կարողութիւնը կը խնայի ինձ համար, համարեա լսելի ձայնով արտասանեց Լիւզմիլա Իվանովսան և ապա, կարծես, ամաչելով իր արարքից և խօսքերից, իսկոյն փէշով ծածկեց ոտերի մերկ մասերը, երեսը առաւ բուռերի մէջ և ընկաւ դարձեալ մտածմունքների մէջ:

Իմ խիզը հանգիստ է, թող ուրիշները դուրսը ինչ ուզում են՝ ասեն, դարձեալ մտածում էր նա: Ուրիշները կասեն՝ «Թող զնայ իր աշխատանքով ապրի» իսկ որտեղ է այդ աշխատանքը, — ահա այս իմ ստացած մի քսնի տասնեակ մանէթնէրը, որոնք հազիւ բաւարարութիւն են տալիս իմ անհրաժեշտ պէտքերին:

— Զէ, չէ այսպիսի նեղ և զըկողութեամբ լի կեանք չեմ

ուզում, քիչ մնաց բարձր ձայնով ասէր Լիւզմիլա Իվանովսան, այնքան նա տարւած էր իր մտածմունքներով, որոնցով իրան արդարացնում էր, աւելի ճիշտն ասած, հանգըստացնում էր ինքն իրեն:

Անցնում էին մտքեր և Սալարեանի գլխով: Մարդիկ յիմարւել և տեղ են ինձ այսքան ժառանգութիւն—հարըստութիւն, իսկ ես կոպէկներ խնացելով և ինձ զրկելով ու հիւծելով աւելացնում էի իմ կարողութիւնը, ով գիտէ ում համար, գուցէ վաղը մի հեռաւոր ժառանգս գայ տիրանայ իմ հարստութեան և վայելելով՝ ծիծաղի իմ յիմարութեան վրայ, — չը կերաւ, թող որ ես ուտեմ, յիմարի հարստութեան շախը տհնեմ: Զէ, եղբայր, սխալում ես, իմ թանգազին ժառանգ, ես այժմ խելօքացել եմ, ես ինքս եմ ցանկանում վայելել իմ հարստութիւնը և ով ինչ իրաւունք ունի ինձ մեղադրելու: Կեանքը ստեղծւած է վայելը համար և յիմարը նա է, ով կարող է և իրաւունք ունի վայելելու բայց չի վայելում: Ինձ մարդիկ տեղ են այդ իրաւունքը, այս իմ ունեցած հարստութիւնը, մինչդեռ ես չէի ցանկանում օգտել այդ իրաւունքից: Այդպէս էր մտածում այն մարդը, որի երկար տարիների կեանքը միայն մի նըպատակ ունէր՝ ժողովել և խնայել ձեսքն ընկած նիւթական միջոցները, իսկ, երբ մի այլ ուժեղ զգացմունք եկաւ յանկարծակի, թափահարեց և ընդգրկեց այդ մարդու հոգին, լցնելով ամբողջ նորա էութիւնը մի քաղցր և ախորժ յոյսերով և զգացմունքով, սկսեց այլ կերպ մտածել և այլ կերպ տնօրինել իր անգոյն կեանքը, հւրաքանչիւր կոպէկի լը, որ նա զըպանից հանում էր, ծախսելու համար, անգոյն մի վայրկեան գողգողում էր, կակսածում իր փիլիսոփայութեան վրայ, բայց երբ յիշում էր իր զեղեցիկ և փարթամ զրացուհուն, նորա կենսատու ժպիտը իր թշերի

վրայ մեղկացնող փոսիկներով, մոռանում էր ամեն ինչ, թուլանում էր նորա կամբը և տալիս էր, որ ստանայ այն ամենը, ինչ գնով ցանկանում էր գրաւել իրեն դուր եկող կնոջը: Կինը կեանքի զօրեղ շունչն է, կեանքի կախարդական շութակը, ասում էր նա, և այդ շնչով ես ապրել սկսեցի, այդ շութակի նւագով հմայւել, թող ուրեմն, այդ շութակի համար էլ զրկեմ իմ թանկագին ոսկիներից, որոնք ես պահում էի ինչոր անորոշ տղագայի համար:



VI

Երեկոյ էր, ամառային զով երեկոյ: Երկնքում շաղ էր տւած հաղարաւոր աստղեր: Խորհրդաւոր երեկոյեան կիսամութը ինչ որ գաղտնի մտորումներով էր տրամադրում մարդկանց: Մենաւոր փողոցներով անցնում էին տղամարդիկ և կանայք, և ամառուայ տարփուա վերջալոյսի տակ սիրով փայփայում էին իրանց ներսը խօսող զգացմունքները:

Լիւդիմիլա Իվանովսան ոտքից ցցլում նորոգւել էր և ամբողջին սպիտակ հագած, գեղեցիկ սպիտակափետուր գլխարկը զլիխին, սիրուն քօտինկաները ոտներին, համբաքայլ անցնում էր դէպի իրանց փողոցը: Յետքից քայլ առ քայլ սպիս էր մի երիտասարդ, գեղեցիկ, յաղթ մարմնով և մաքուր հազնւած:

Լիւդիմիլա Իվանովսան կանացի ինստիկտով իսկոյն զգաց, որ անձանօթ պարոնը իրեն է հետեւում ու աւելի յամբացրեց իր քայլերը, իսկ պարոնը հաւասարւեց տիկնոջը, ապա ձկւեց և թափանցող հայեացը ձգելով նրա վրայ, անցաւ:

Լիւդիմիլա Իվանովսան ամօթիսած և յանցաւոր հայեցքով պատասխանեց պարոնին:

Անձանօթն անցաւ, զնաց, բայց գանգաղ քայլերով առաջ զնալով, կարծես, սպասում էր տիկնոջը: Այդպէս բաւական անցան առաջ, բայց արդէն Լիւդիմիլա Իվանովսան հասաւ իր բնակարանին ու կանգ առաւ:

Անձանօթ պարոնը զգաց, որ տիկինը կանգնել և ինչ որ բանի սպասում է,—յետ դարձաւ և անզգալապէս սկսեց իջնել ներքեւ: Երբ հասաւ տիկնոջը և հաւասարւեց, մի վայրկեան կանգ առաւ և ուզում էր մի քայլ ևս անել որ անցնի, երբ տիկնոջ ամբողջ շութեամբ անցաւ մի անբացարելի, անզուսպ հետաքրքրութիւն և տարփուա տենչանք դէպի այդ առողջ և համարձակ անձանօթը: Վայրկեանը վճռական էր, ըովէն թանգ և տիկինը չը վախեց, նա համարձակ և անվախ դարձաւ:

—Ո՞վ էր դուք, հետաքրքիր է իմանալ:

—Մարդ եմ, —եղաւ պատասխան:

—Չեմ կասկածում, վրայ քերեց տիկինը:

—Միթէ ձեզ համար հետաքրքիր է իմ անունը և ազգանունը, քան ես ինքս:

—Շատ իրաւացի է, մարդը ինքը աւելի հետաքրքրական է, քան նրա ով և ինչ լինելը, — ապա ուրեմն ես էլ ձեզ չեմ ասի իմ ով լինելս, — այսպէս անձանօթ ծանօթանալ աւելի հետաքրքրական է և օրգինալ, այնպէս չէ, չարածճի ժայիտով դարձաւ լիւդիմիլա Իվանովսան:

—Առայժմո ցտեսութիւն, երեխ այլես կը պատահենք փողոցում և այլ ևս ծանօթ անձանօթներ կը լինենք, գարձեալ չարաճճի ժայիտը երեսին դարձաւ լիւդիմիլա Իվանովսան, մեկնելով իր սպիտակ ու փափուկ ձեռքը:

Անծանօթ պարոնը մեկնեց ձեռքը և մի քանի վայրակեան փաղաքով ճնշումով սեղմեց տիկնոջ ձեռքը:

—Ճտեսութիւն,— ճկունութեամբ թերւեց, մի ուսը սանդուղբն գրաւ տիկինը և մտաւ ներս փողոցի դռնով:

Պարոնը մաց մի առ ժամանակ կանգնած և ապա դանդաղ քայլերով անցաւ դէպի փեր, փողոցով:

Կասկածու հետաքրքրութեամբ իւղմիլա իվանովան մտաւ իր սենեակը: Ո՞վ էր այդ պարոնը, մտածում էր նա, բայց ով էլ լինի, նա ինձ հետաքրքրեց և լաւ եղաւ որ ծանօթացայ նորա հետ:

Կենաքը մեր ճանապարհին սփոռում է անթիւ հետաքրքիր պատահարներ, — միայն աչալուրջ և ընդունակ պէտք է լինել այդ պատահարների մօտով անտարբեր չանցնելու: Նա երիտասարդ է, գեղեցիկ, առողջ և ինչու չը ծանօթանալ: Իւրաքանչիւր հետաքրքիր ծանօթութիւն մի գանձ է: Սյրպէս վճռեց նա և յուզւած զգացմունքները հանգստացնելով անցաւ Սալարեանի սենեակը:

Սալարեանը նստած սեղանի զլսին դեռ թէյ էր խըմում: Ա եղանի վրայ, մաքուր սպիտակ սփոցի վրայ փրփրում էր պապուն մաքրութեամբ հեշտաենը, մօտը շարւած քաղցրաւէնիներով և զանազան ուտիկիդէնիներով: Ինքը Սալարեանը հագած ունէր սպիտակ կիտել և փայլում էր մաքրութեան և նոր զղեստների մէջ:

—Ահա և ես, ուրախ և ժպատակից, համարեա թոշելով ներս մտաւ իւղմիլա իվանովան: Ի՞նչ լաւ էք մտածել, թէյ էր պատրաստել աւել որբան ծարաւ եմ:

—Ա, իւղմիլա իվանովան, ինչքան ուրախ եմ, ինչքան ուրախ եմ, վեր թուաւ Սալարեանը և երկու ձեռքերով բռնելով նորա մատներից, դողդոջուն զգացմունքով մօտեցրեց իր շրթունքներին: Նստեցէր, ինդրեմ, և կառավարեցէր, ինչ պէս ձեր տանը:

Իւղմիլա իվանովան նայեց շուրջը և երեսը անակորժ կերպով ծումուկով, դարձաւ Սալարեանին—որքան հին են ձեր կահկարասիները, այս էլ ձեր գրասեղանն է, միթէ սորանից լաւը չէիք կարող ունենալ, իսկ այս իւղաներկ հին պատկերները: Ովքելը են:

—Սոքա իմ ծնողներից են մնացել ժառանգութիւն, ես ոչինչ չեմ առել, աւելացրել, իսկ այս պատկերները իմ ծնողներն են:

—Նորոգել է հարկաւոր ամեն ինչ, համարձակ, նոյն իսկ յանդուզն հրամայաբար դարձաւ իւղմիլա իվանովան:

—Այ դուք, Պետօր Արտեմիչ, որքան հետաքրքիր էք այսօր ձեր կիտելի մէջ, երբ սենեակի կահկարասիներն էլ փոխէք, աւելի լաւ կը լինէր հանութեամբ աւելի շուտ-շուտ կը յաճախէի ձեզ:

—Միթէ դուք յաճախում էք ինձ մօտ իմ կահկարասիքի, և շորերիս համար, կոտրւած դարձաւ Սալարեանը տիկնոջը:

—Ի՞նչպէս անեմ ձեզ, որ անկեղծ լինեմ, ի հարկէ որքան հաճելի չը լինի ինձ ձեղ մօտ լինել, այնուամենայնիւ արտաքին պայմաններն էլ ազգում են մաքղանց յարաքերութիւնների վրայ: Երեակայեցէք, եթէ դուք մանէք մի կեղտոտ, անկարգ և մոայլ բնակսրան, անշուշտ, այդ տան մարդիկն էլ մոայլ և անհետաքրքիր կերեան, յամենայն զէպս ուժեղ կերպով կը նսկմանայ և նոցա ներքին արժանիքները—վերաբերմունքը և այլն:

Սալարեանը իսկոյն յիշեց իր սենեակի նախկին խառնակ և կեղտոտ վիճակը և որտումը մի տեսակ թիթեռութիւն զգաց:

—Կաշխատեմ ձեղ հաճելի գարձնել իմ սենեակը, բայց այժմ ինդում եմ մի բաժակ թէյ, եղէք ինչպէս ձեր տանը և ինքներդ ձեղ համար թէյ ածէք:

Լիւդմիլա իվանովսան քակեց սպիտակ վերնազգեստի կոճակները, գլխարկը հանեց դրեց աթոռի վրայ և ապա մօտենալով հեշտաեռին որ Սալարեանի մօտ էր դրած, սկսեց թէյամանից թէյ ածել իր համար:

Տիկնոջ մօտիկութիւնը և նրանից բուրող թարմութիւնը ախորժ նիրհով շնչաւորեց Սալարեանին:

—Ինչ լաւ վերնազգեստ ունէք, երեի նոր էք գնել.

—Այս, Պետր Արտեմիչ, այսօր միայն ձեր տւած փողերով, համարեա բոլոր ձեր տւած դրամները այսօր ծախսեցի, ինձ համար հարկաւոր շորեր և իրեր առնելով, ափսոս չը մնաց մի բան, որ սկսեակիս համար էլ մի բանի բաներ առնէի:

—Ոչինչ, ես ձեզ կարող եմ այլ ևս հարկաւոր դրամը առաջ կարիքաների համար, ասացէք առանց քաշւելու, երբ հարկաւոր լինի:

—Չեր բարութիւնը սահման չունի, Պետր Արտեմիչ, շատ շնորհակալ եմ, ժպտալից դարձաւ տիկինը, աւելի մօտենալով Սալարեանին:

Սալարեանը ցնցւեց և անզգալապէս բռնեց տիկնոջ լիքը և փափուկ բաց թէը.

—Որքան առողջ էք և կենսալից, Լիւդմիլա իվանովսան ախանձում էք, կոկտութեամբ և չար հեղնութեամբ դարձաւ տիկինը:

—Նախանձում եմ որ դուք բոլորովին իմը չէք:

—Ա, դա դժւար չէ, պէտք է արժանանալ:

Լիւդմիլա իվանովսան, այս ասելով, աւելի մօտեցրեց իր, Սալարեանի ձեռքում գտնւած, թեր:

Սալարեանը համբուրեց արմունկից վերև բաց թեր և ապա մօտեցրեց իր խորշոմած ու ցամաքած երեսին:

Սալարեանը ուժգին յուզւեց, իրեն ներսը ընդգրկող

զգացմունքից կծկւեց և նորա խորը ընկած աչքերից երկու խոշոր արտասունքի կաթիլներ պոկելով երեսի խորշամներով գլուրեցան ընկան գեղեցիկ կնոջ թէի վրայ:

—Խէզը, յանկարծ էլեքտրական ցնցումով անցաւ Լիւդմիլա իվանովսայի մտքով և ամբողջ մարմնով փշաքաղեց, բայց տեսնելով զիմացը կուչ եկած, կուացած Սալարեանի մէջքը, որը աւելի և աւելի իջնում, կարծես, խորանում էր իր առաջը գէպի ոտները, խղճահարւեց, փափկեց և կտրւած ձայնով գարձաւ՝

—Է, ինչ էք անում, Պետր Արտեմիչ, բաւական է, երեխայ չէք հծ:

Սալարեանը թուլացաւ, ընկաւ ծնկաչոք Լիւդմիլա իվանովսայի առաջը, ամուր սեղմեց թեր և մօտեցրեց զրթունքներին, և աղիողորմ արտասունքները կլանելով, հազիւ արտասանեց՝

—Առ ամեն ինչ, առ, բոլորը բոնն է, միայն մի թողնիր ինձ մենակ, քո շունչը, քո ներկայութիւնը ինձ կեանք է տալիս, ողի է ներշնչում:

—Բաւական է, Պետր Արտեմիչ, վեր կացէք, այստեղ կարող է մտնել աղախինը, ինչ կասին . . .

Երեկոն անցաւ մտերիմ խօսակցութեան մէջ: Սալարեանի այլքափ անկեղծ զգացմունքները և նորա խօսքերը շառ ամեն ինչ՝ առաւել գրաւեցին Լիւդմիլա իվանովսային:

Կեանքը ինքը ողջակէզ ոչխարի նման գլուխը դնում է իմ առաջ, ինչնու մերժել, հրել, եթէ նա ինձ տալիս է ոյն-ամենը, ինչ որ իմ կեանքի համար պէտք է:

Այդպէս էր մտածում Լիւդմիլա իվանովսան, մոռանալով խլէզի տպաւորութիւնը և ցամաքած ու անարիւն շըրթունքների համբոյըները, որ անդադար իջնում էին նորա

փակուկ, տաքութիւնից վարդագոյն դաձրած, բաց թիւն,

VII

Լիւդմիլա հվանովսայի և Սալարեանի յարաբերութիւնները քանի զնում աւելի ու աւելի ջերմանում էին. Սալարեանը ոչինչ չէր խնայում և ամեն կերպ աշխատում էր, գոնէ նիւթական օգնութիւն հասցնելով, գոհացնել և գրաւել իր դրացունու սիրտը: Լիւդմիլա հվանովսան դարձեալ Սալարեանից վերցրեց հինգ հարիւր բուրլու չափ դրամ, և լրացրեց իր պակասութիւնները: Առաւ իր համար աշունքւայ ներքին և գերին տաք շորեր, սենեակի համար էլ գընեց պահարան, զզրոց և մի լաւ մահճակալ իր նոր մատրացով: Նորոգում էր և Սալարեանի սենեակը, —դրսցունու ախորժելի պահանջը անուշադիր չէր կարող անցնել նորա համար: Հին գրասեղանին փոխարինեց նորը, Լիւդմիլա հվանովսայի ճաշակով առնւած մի շեղ գրասեղան իր արդու զարդով և հարկաւոր պարագաներով: Փոխւեցան և իւղաներկ պատկերների շրջանակները, մի խօսքով որքան յարաբերութիւնները նոցա մօտենում էին և ջերմանում —մըտերմանում, այնքան նորոգութիւնները երկու կողմից ուժեղ կերպով առաջ էր զնում:

Վերջապէս Սալարեանը առաջարկութիւն արաւ Լիւդմիլա հվանովսային և ստացաւ պատասխան, որ, նախ քան վճռական խօսք տալը, նա պիտի խորհրդակցի էր ծնողների հետ, որոնք Կօլոմնա քաղաքից վերջին տարիները Մոսկւա են տեղափոխել:

Սալարեանը անհամբեր սպասում էր Լիւդմիլա հվանովսայի իրեն ծնողներին գրած նամակի պատասխանին, և

պէտք է ասել, չէր կասկածում նոցա համաձայնութեան վըրայ, բանի որ նոցա գործերը, իրենց աղջկայ պատմածից երեսում էր, որ քայքայել էին և հայրը, որ առաջ գործարանատէր էր, այժմ ինքն էր ծառայում ուրիշի գործարանում, ուժ Մոսկвою, ինչպէս առում էր Լիւդմիլա հվանովսան:

— Խօսք չը կայ իմ հարստութիւնը — կալւածները, իմ գիրքը նոցա կը գրաւի և նորանոր յոյսեր կը ներշնչի նոցա մէջ, մտածում էր Սալարեանը:

Եւ նա չը սիալւեցաւ:

Եւ ինչու չօգնել գարձեալ մտածում էր նա, միայն թէ նոցա համութիւնը և օրնութիւնը լինի:

Լիւդմիլա հվանովսան իր նամակում մանրամասն յիշել էր ամեն ինչ:

Նա գրում էր, — ահա 2—3 ամիս է, ինչ որ արդէն գործի է մոտել, շնորհիւ մի բարեսիրտ ստատուկի սաւետնիկի, որի տանը ինքը ապրում է, և որը այժմ մինչև ական ջները սիրահարւած է իրեն վրայ, և այժմ առաջարկութիւն է անում:

Սալարեանը, — գրում է Լիւդմիլա հվանովսան, թէ հայ է բայց լաւ և բարի մարդ է և անչափ հարուստ, միայն քաղաքում ունի երեք տուն, որոնք մեծ եկամուտներ են բերում, ունի և կալւածք, մի քանի ժամ քաղաքից հեռաւրութեան վրայ: Անկասկած, գրում էր նա, կունենայ և պատրաստ զրամագլուխ, քանի որ չափազանց գծուծ և Ժըլատ է ապրել իր բոլոր կեանքի ընթացքում, և այժմ միայն ես նորա քսակի բերանը լայն բաց եմ արել, — ծախսում է անհաշիւ և առասա, որպէս զի ինձ դուր գայ և աւելի երիտասարդ երեայ: Ճաղատ ստատուկի սպետնիկը — ծաղ-

բարար գրում էր նա—արդէն ինձ պաշտօնապէս առաջարկութիւն է արել, մտում է ձեր օրհնութիւնը և հաճութիւնը իրեն օգնելու մասին Սալարեանի կողմից նա ոչինչ չը գըրեց, կասկածանքների տեղիք չը տալու համար:

Նամակի վերջում իիւդմիլա իվանովան իրան արդարացնում էր նրանով, որ ինըը սովորած լինելով ազատ և լաւ ապրել, նոյնիսկ առաջին ամուսնու ժամանակ, այժմ չի կարող նեղ և նիւթականից ճնշւած կեանքով ապրել, իսկ իրան ով կառնի երիտասարդներից, քանի որ ոչ օժիտ ունի և ոչ էլ այնքան երիտասարդ է, իսկ այնպէս պատահած զամուխը իշկա—լղարիկին գնալ ոչ մի միտք չունի, քանի որ դորանով թէ իրեն դրութիւնը կը վատացնի և թէ աղքատների թիւը կաւելացնի. Ես յօժարութեամբ կը գնամ իմ ճաղատ ստատսկի սաւետնիկին, միայն կրկնում եմ, թանգագին ծնողներ, ձեր օրհնութիւնն եմ ուզում և ձեր հաճութիւնը:

Եւ այդ օրհնութիւնը ու հաճութիւնը չուշացաւ գալու: Ծնողները շատ ուրախացան իիւդմիլայի վճոից և նամակում շտապեցնում էին առանց ուշացնելու ամուսնանալ:

Մեր գործերն էլ, գիտես,—գրում էին նոգա, այնքան լաւ չեն,—Սաշան ահա համալսարանումն է, գեռ երկու—երեք տարի կայ աւարտելու, իսկ Սերեօֆան և Մաշան գիմնազիկայումն են սովորում, դեռ ևս ամենքին էլ պէտք է համսնել, օգնել, իսկ ինչժպ, —գիտես հօ հայրդ ինչ է ստանում, հաղիւ հաղ բաւականանում է մեղ քոլորիս: Ամուսնացիր և մեզ էլ մի մոռացիր, օգնիր, ինչով կարող ես: Աստուած քեզ հետ, սիրտդ ամուր պահիր և մի մոռանար, դու այժմ գեներալշա ես գառնալու, դա ամենքին չի վիճակւած: Ոչինչ, որ քիչ հասակով է, այժմ ջահիները ծերերից վատ են և անպէտք, —հիւանդոտ, փուչ և անհաւա-

րիմ: Նու, Սստւած պահի քեզ, չը մոռանաս հարսանիքիդ օրը, զրում էին նոքա, հեռազրել մեզ, որ մենք էլ այսաեղ մի փոքր հարսանիք սարքենք:

Իիւդմիլա իվանովան նամակը ստանալուն պէս, ուրախ գէմքով մտաւ Սալարեանի մօտ և ձեռքը մեկնելով Սալարեանին ասաց՝

— Դէն, Սստւած երեխ այդպէս է ցանկացել, ստացանակ, իմ ծնողներս գէմ չեն և օրհնում են ինձ և ձեզ:

Սալարեանը տեղից վեր թռու և արտասուքը աչքերին, համբուրեց իիւդմիլայի ձեռքը:

— Աստւած միայն գիտէ, թէ որքան եմ ես ձեզ յարգում և սիրում: Ոչինչ, ոչինչ չեմ ինայի քեզ համար...

Արտասուքը խեղդեց ծերուկին, և նա աւելի կծկւեց, սեղմենց մեծ ու անսպասելի երջանկութեան տակ:

Իիւդմիլա իվանովայի սրաում մի ինչ որ բան կտրւեց, քաշեց, սեղմեց և ծանր կերպով իջնելով բազկաթոռի վրայ, գլուխը քաշ, կամաց սկսեց արտասւել:

Որպիսի վերջաւորութիւն, անցաւ նորա մտքով, բայց հետզհետէ սրտապնդւելով, նա դարձաւ Սալարեանին:

— Լսեցէք, Պետր Արտիմիչ, — ես համաձայն եմ ձեր կինը գառնալու, միայն մի պայմանով, որ անողոք խստութեամբ ես կատարելու եմ, — լիսկատար ազատութիւն պէտք է ունենամ ես, և ոչ մի բան, նիւթական զոհողութիւն չը պիտի ինայէք իմ ապագայ կեանքիս համար:

— Ամենը, ամենը քեզ, Լիւդմիլոչկա, ամեն, ամեն ինչին համաձայն եմ, միայն մի անկիւն ունենամ գնելու իմ մենակ և գժբաղդ գլխիս համար:

Սալարեանը մանուկի պէս արտասում էր ներքին յուզմունքից, նա աւելի ես կծկւել և կուչ էր եկել, գլուխը գրած գեղեցիկ կնոջ ծնկան վրայ, որը այժմ դառնալու էր իր կինը,

VIII

Գիշերւայ ժամը 12-ն էր, Սալարեանը և Լիւդմիլա Իվանովսան նոր էին վերադարձել օպերային ներկայացումից: Նոքա արդէն ամուսիններ էին: Այդ նկատելի էր ամեն ինչից:

Սալարեանը արդէն առաջւան ստւերի նման երերւող կմախքը չէր և բաւական լցւել գէմքի դիմագծերը խորացել, ամրացել և ուժեղ վճռականութիւն էին ստացել, կարծես, կեանքի անորոշութեան առաջ յուզող, տանջող զգացմունքները նորա մէջ հանգստացել, ամրացել ու պողովատացել էին: Նորա իւրաքանչիւր քայլը այժմ հանգստութիւն ու որոշութիւն էր արտայայտում, արդէն առաջւան ջղային Սալարեանը չը լինէր, կարծես,—անհանգիստ մկան նման վախկոտ աչքերն էլ այժմ հանգստացել էին և նոյն իսկ հեգնանք էին արտայայտում:

Մի խօսքով Սալարեանը ամուր նստել էր իր կեանքի թամքին, նա իր ձիռ արագ և ուժգին թափից այլ ևս չէր վախենում:

Լիւդմիլա Իվանովսան էլ փոխւել էր, բայց նորա փոխւելը նկատելի էր աւելի արտաքին կեանքի մէջ: Խօսք չը կայ, նա այժմ շատ էր լցւել, ֆափկել և ազնւացել, բայց և հագնւում էր և պճնւում, ինչպէս ամենաարուստ մի կին, որը աւելի ևս գեղեցկութիւն և գրաւչութիւն էր տալիս նորան: Տան բնակիչները արդէն վաղոց հեռացել էին և ամբողջ եօթը սենեակից բաղկացած բնակարանը լցւած էր այժմ նոր և ամենամօդերն կահ-կարասիով: Նորոգել էր և տունը, և որքան դա հնարաւոր էր կարճ ժամանակում նո-

րոգութիւն էր կատարւած ներսից և գրսից:

Այժմ Սալարեանի բնակարանը մտնողը կապչէր, այնքան շքեղութիւն և հարուստ արդ ու զարդ կար նորա մէջ:

Լիւդմիլա Իվանովսան առատ, նոյնիսկ սկզբներում անհաշի ծախսում էր: Իւրաքանչիւր նորա չնչին կապրիզը, ցանկութիւնը կատարւում էր: Դրամը առատութեամբ անցնում էր գեղեցիկ կնոջ ձեռքի միջոցով շքեղ մագագինները: Լիւդմիլա Իվանովսան չը մոռացաւ և իր ծնողներին և հարազատներին, դրամական օգնութիւնը ևս անպակաս էր: Ծնողները շատ գոհ էին, մի խօսքով ամենքը լիացան և կշացան, բարօրութիւնը առատութեամբ լցւում էր Լիւդմիլա Իվանովսայի տունը բերնէ-բերան և գուրս թափւում նոյն իսկ ուրիշների ողորմութեան ամանը: Թէ այդպիսի առատութիւնը և թէ իր կեանքի արագ ու ուժգին նորոգութիւնը մի առ ժամանակ մոռացնել տւին նորան իր ամուսնու ծերութիւնը, և նոյն իսկ խէզի տպաւորութիւնը:

Փարթամութեան ու հարսանութեան մէջ անյայտցել էր և գլուխը պահել:

Այդպէս է ոսկու հզօր ոյժը:

Խէզը այժմ ոսկու զրահ էր հագած և նա համարձակ մօտենում էր գեղեցիկ կնոջ առողջ և առատ մարմին, առանց ցնցում անզամ առաջացնելու նորա գզւած երակների մէջ:

Սալարեանը խալաթը հագած, ներկայացումից յետոյ լաւ ընթրիք արած, ծխում էր անուշահոտ ու ընտիր սիգար: Նա նայում էր իր շուրջը ինչ որ ինքնաբաւական և հիացմունքով լի հայեացքով և մտածում: Նա յիշում էր իր առաջւան և այժմեան կեանքը և տեսնում, ինչպէս մի կին

եկաւ և միջի եղած պատւարը քանդեց: Նա հասկանում էր, որ Լիւդմիլան իր կինը դարձաւ միմիայն իր հարստութեան համար, նա հասկանում էր, որ Լիւդմիլան իրեն չի կարող սիրել, բայց կապւեցաւ իր հետ միմիայն հարստութեամբ օգտւելու նպատակով, նա գիտէր և այն, որ եթէ ինքը չը կատարէ նորա ցանկութիւնները, չը բաւարարէ բոլոր նրա պահանջներն ու քմահաճոյընները, որ եթէ դարձեալ ինքը բռնէ մանրութեան և ժլատութեան ճանապարհը, նա կարող է նոյն իսկ թողնել իրեն և հեռանալ: Այդ միտքը հաստատուն կերպով նստել էր նորա գլխում, այդ պատճառով ոչ մի բան չէր խընայում կնոշից, տեսլ էր նորան ազատ ծախսելու և լայն ու արձակ ապրելու լիակատար իրաւունք:

Աստած իմ, որքան փոխեց իմ կեանքը, մտածում էր Սալարեանը: Հէսց այդ սեղանատունը, որ առաջ իմ ննջարանը և գրասենեակն էր:—Նա նայեց դիմացի բաց գունը, այնտեղ Լիւդմիլայի ննջարանն էր և առաստաղից քաշ արած կարմիր աբաժուրով լամպայի լոյսն էր դողում: Դա հէսց այն գունն էր, որ առաջ ծածկւած էր մի մաշւած կապիրտով և Սալարեանի մահճակալի ճակատն էր կազմում:

Տիշեց նա և այն առաջին գիշերը, երբ այդ կապիրտը ինչպէս մի անխորտակելի պատւար կախւած էր պատից իր և Լիւդմիլայի մէջ, և երբ մի անզուսպ ցանկութիւն մզում էր նորան քաշել, պատուել այդ կապիրտը, հեռացնել այդ պատւարը, բայց բուռն ցանկութիւնը և մահու չափ տեհնչը բաւական չէր այդ կապիրտը պատուելու և բանալու դուռն գեպի գեղեցիկ և փարթամ կնոջ գիրկը, հարկաւոր էր մի այլ ոյժ—ոսկին, որը եկաւ և կապիրտը ինքն իրան իջաւ և անցքը բացւեց, և հրաշալի կնոջ լիքը ու տարփու ազդեցիր իրանք իրանց սահեցան դէպի Սալարեանի մահճակալը:

Ոսկի... Սալարեանը զգաց գորա հզօր ոյժը և ինչ-

պէս պատերազմի դաշտի մարտի աւանդարդ առաջ մղեց և անառիկ կնոջ առողջ ու լիքը կուրծքը իսկոյն բացւեցաւ թօշնած ու անարիւն ծերուկի պոօչների համար:

Սալարեանը ախորժելով ներս էր քաշում թանկագին սիզարի ծուխը և ինքնաբառական կերպով իր շուրջը նայում դարձեալ:

Ահա պատի մօտ, ուր առաջ ընկած էր նրա խարխուլ զգրոցը, այժմ դրած է մի մեծ կաղնի պահարան, մէջը լիքը Աստծոյ բարիքներով, զանազան թանկարժէք խմիչքներով և ուտելեղէններով: Առաջ այդ զգրոցի աչքերից մէկում մկներն էին որսում շաբաթւայ մնացած չոր հացի և պանրի քարթուացած կտորները: Եւ Սալարեանը ուրախացաւ, որ այնտեղ պահարանը լիքն է ամեն տեսակ ուտելեղէններով և խմիչքներով, և որ վաղը կամ միւս օր, ամեն օր ինքը կը վայելի դու:

Սալարեանը աչքը դարձրեց այն կողմը և նորա հայեցքը դիպաւ սեղանի մօտ գրած մարմար շերտով տումբօչկան, վերան զրած արծաթի պէս պապուն գեղեցիկ հեշտաենը, որի տեղ իր ամուրի ժամանակ աղախինը բերում էր մի գեղնած կանաչած հեշտաեն:

Որ կողմը զարձնում էր իր հայեցքը Սալարեանը, ամեն ինչ տեսնում էր նորոգւած, փոխւած, հին իրեղէնների հետքն անգամ չկար,—ամեն ինչ նոր էր, ճաշակով, գեղեցիկ, նոյնիսկ փայլ ստացած:

Սալարեանը մի անգամ էլ սիզարի ծուխը ներս քաշեց և ինքնաբառական կերպով աչք ածեց իր շուրջը:

Ինքնազո՞ն ժպիտը անցաւ նորա մաքուր սափրւած ու լպսուած դէմքով:

—Ամեն ինչը իմն է, անցաւ նորա մտքովը, —նա էլ իմն է... մտածեց նա, սակայն մի սառն՝ և բարակ սուրի

նման խոթող կասկած անցաւ նորա ներսովը, երբ յիշեց, որ թարռում այդ օրը մի ինչ որ զրաւիչ արտաքինով, առողջ և յաղթանդամ երիտասարդ պարոն շատ սիրալիք կերպով գրուցում էր իր կնոջ հետ ֆոյէում, երբ ինքը իր սպաշտօնակցի հետ ման էր գալիս: Բայց իսկոյն այդ կառկածը փարաւեց, անցաւ, երբ ննջարանի դուռը բացւեց և ամբողջովին շղարշապատ սպիտակ կապօտը հագած երեաց Լիւդմիլան և դառնալով Սալարեանին փաղաքշալից ասաց՝

—Պեօտր Արտեմիչ, ժամանակն է քնելու, գնացէք ձեր ննջարանը:

Սալարեանի մանր ու սուր աչքերի միջով անցաւ արտասովոր մի կրակ և կայծերի նման պէծին-պէծին տալով, փայլեց: Նորա ձեռքերը սկսեցին դողալ, ծնկները թուլանալ, ներքին ծնոտը կախւեց և վարի պոօշը լաթի նման իջնելով, մէջից ծորաց ջրի նման մի կաթիլ թուր:

—Զէ, Լիւդմիլոչկա, դեռ վաղ է քունս չի տանում:

—Ինչպէս գիտէք, ես քնում եմ, և դուռը յետ անելով, անցաւ իր սննեակը:

Եւ ինչ որ անհանգիստ զգացմունը անցաւ նորա միջով:

—Դարձեալ կը գայ այդ խէկը, անցաւ նորա մտքովը, և անփոյթ կերպով մէջքի վրայ ընկաւ մահճակալի դիմացը պատի մօտ դրած թաւշեայ սոփկայի վրայ:

Անցան մի քանի ծանր րոպէներ և ահա դուռը կամացուկ ճանաց և Լիւդմիլայի ննջարանի շէմքին երեաց Սալարեանը հրձւող ժպիտը դէմքին:

—Պեօտր Արտեմիչ, դուք չէք ուզում քնել, ինձ էլ անհանգուացնում էք, այժմ արգէն ուզ է, ես էլ յոզնած եմ, դարձաւ Լիւդմիլան:

—Ոչինչ, Լիւդմիլոչկա, ես այնպէս, մի քանի րոպէով եկայ միայն քեզ մօտ,—կը պառկիս, ես կերթամ, ես կեր-

թամ.. և յանցաւոր ժպիտը երեսին Սալարեանը մօտեցաւ գեղեցիկ կնոջը, որը մէջըի վրայ, և իր առատ ազդրերը անփոյթ կերպով ձգւած դէպի ցած, պառկած էր սոփկայի վրայ:

Սալարեանը մօտեցաւ և ծունկի գալով փափուկ խալիչայի վրայ, ձեռքը մեկնեց էիւդմիլայի առատ և փափուկ կուրծքը և քակելով կապօտի կոճակները, սողացրեց ներս, իսկ միւս ձեռքը դնելով նորա խիտ և բաց գոյնի մազերին, իր ջրու շրթունքները մօտեցրեց Լիւդմիլայի կարմրած, առատ այտերին, պոչներին ու համբուրեց:

Լիւդմիլայի ամբողջ մարմնով անցաւ մի ցնցող և անհանգիստ զգացմունք,

—Պեօտր Արտեմիչ, ինչ էք անում բաւական է վերջապէս, դուք չէք ուզում նոյնիսկ գիշերն էլ քնիմ:

—Զէ, չէ, սիրելիս, թանկագինս, ես այնպէս փոքր ինչ յուզւած...

—Դուք գիտէք, որ ես փախչելու չեմ, միշտ ձեզ մօտ եմ և ձերն եմ, գնացէք Պեօտր Արտեմիչ, ուզում եմ քնել:

—Զէ, չէ, անգինս, ես այնպէս... յուզւած եմ, կերթամ, այժմ կերթամ...

Սալարեանը աւելի և աւելի սողում էր դէպի Լիւդմիլան և խէզի նման փաթաթւում փարթամ ու ասող կնոջ իրանով և ինչպէս վամպիր կպչում, ձծում իր մազաղաթի նման չորացած շրթունքներով նորա առողջ և թարմ բաց կուրծքը:

Լիւդմիլան անհանգիստ շարժում արեց և տհաճութեամբ նորից դարձաւ Սալարեանին:

—Ի՞նչ էք ուզում, հեռացէք, Պեօտր Արտեմիչ:

—Զէ, չէ, ես այնպէս... ես հիմա... անգինս, հոգեակը, ես հիմա կը գնամ:

Գրգուած ծերուկը չէր հեռանում և աւելի ու աւելի անտանելի էր դառնում գեղեցիկ կնոջ կրծքին ընկած իր փաղաքանքներով:

Լիւզմիլան փոքր ինչ բարձրացաւ, բայց Սալարեանի ոսկոպացած ձեռքերը ամուլը խտտած էին Լիւզմիլային, աւելի և աւելի սեղմում էին նորա իրանը:

— Վերջապէս, սա անտանելի է, շնչաց Լիւզմիլան և թուլացած և ինքնամուպացութեան մէջ ընկաւ բարձի վրայ:

Սալարեանը արբած Լիւզմիլայի բաց և փափուկ մարմնով, ուշ չէր գարձնում Լիւզմիլայի թոյլ բողոքին, ամուլ սեղմում էր նորան և ատամները կրծտացնելով, ծածկում փարթամ կնոջ ամբողջովին մերկացած մարմինը համբոյրներով:

Վերջապէս խաւար մութը պատեց նորա աչքերը, և նա, ինչպէս կատաղած ծերացած բորենի, վերջին ճիգն էր թափում յօշտելու, պատառոտելու իր համեղ որսը, ուշ չը դարձնելով իր պառաւած, թօշնած մարմնի տակը թրպտացող առողջ կեանքի բուռն և փոթորկոտ բողոքին...

Լոեց ամեն ինչ—շշուկ, շունչ անգամ, և անցան յանցաւոր ըռպէներ, մահու չափ ծանր և արձճի պէս ճնշող մէկի համար և յուզիչ ու ճակատագրական միւսի համար:

Թառամած, դեղնած և մեռնող տերեները, կարծես, ընկնում էին արգաւանդ և խոնաւ հողի վրայ և մահու շընչով համակում նորան:

Սալարեանը գաղտագողի, շնչասպառ ու մատների ծայրերով երերալով հաղիւ սողաց, անցաւ իր սենեակը և պատուհանի խիտ վարտոյըը իջեցնելով լուսնի յամառ և կըշտամբող շողերի վրայ, հանւեց և մեռելի նման ընկնելով իր փափուկ մահճակալի վրայ, ընեց փոթորկոտ ու անրջօրէն անհանգիստ քնով...

IX

Աշուն էր. Փչում էր առաւօտեան զով քամին: Տերեաթափ ծառերից ընկնում էին վերջին գունատ, գեղնած տերեները և մերկ ծառերը սառն ու մահաշունչ քամու տակ խոնարհեցնում էին իրենց գլուխները: Մեռնում էր ամեն ինչ,—մարդիկն էլ շտապ—շտապ անցնում էին փողոցով մըսայլ, թախծոտ գէմքով, գլուխները քաշ արած, կարծես, չը կամենալով նայել ամպամած, թխպած երկնքին:

Ամեն ինչ համակւած էր թախծոտ, բայց հաճելի ու խիտ տիբութեամբ: Եւ մարզը ընութեան ամայութեան մէջ զգում էր իրան, կարծես, մենակ, մեկուսացած:

Լիւեմիլա իվանովան տաք և ամուր հագնւած ամայի փողոցներով շտապում էր քաղաքային այգին: Ահա նա անցնում էր մի փողոցով, որի խարխուլ ու փայտէ տախտակներով կարկտած հին ու քայքայւած սները գեռ թաց էին գիշերը եկած նօսր անձրեից: Փողոցը լուս էր, որը ու մենակ, երբեմն միայն դրան տակից շունն էր մէկ—մէկ հաջում և դարձեալ լուսմ, ընդհանուր ծոյլ հանգստութիւնը, կարծես, չը կամենալով վրդովել:

Քրտնած, դեռ թաց պատուհաններից նայում էին դաւական քաղաքի մեջան կանայք և զարմանում էին, որ իրանց փողոցով անցնում էր մի այդպիսի փարթամ և հարուստ հագնւած կին:

Ո՞ւր է գնում նա, հետաքրքրութեամբ մտածում էին նոքա,—գուցէ գնում է մօտակայ գերեզմանոցը, ուր ունի թաղւած սիրելու դիակը,—գուցէ ժամադրութիւն ունի նըշանակած քաղաքի ծայրում, և այսպէս հաղար ու մի ենթա-

Վրութիւններ անելով, մէկ պատուհանից միւսն էին ձանապահ ձգում կիւղմիլային:

Յանկարծ փողոցի ծայրից երեաց մի պառաւ կին և երբ հաւասարւեց կիւղմիլային, կուցած մէջքը բարձրացնելով, սուր հալեացք ձգեց կիւղմիլայի վրայ և ողորմութիւն խնդրեց:

Կիւղմիլան բաց արաւ իր բիգիկիւլը և մէջից հանելով մի արծաթ մանէթ դրամ, դրեց պառաւի բուռը և արագ-արագ հեռացաւ:

Պառաւը զարմացաւ և անչափ ուրախացած բացեց օրհնաբանութիւնների տոպրակը և երկար բարեմաղթութիւններ անելով կամաց կամաց անյայտացաւ կիսափուլ փայտէ գունատւած տների և պատերի միջով:

Կիւղմիլան դեռ երկար գնում էր այդ փողոցով և ողբառը չափազանց ուրախ էր, որ այդ փողոցներով ոչ ոքին իր ծանօթներից չի պատահում և, կարծես, ինքն մի օտար բաղաքում գտնւելիս լինի և անծանօթ մէկը լինի,

—Նա էլ չը գիտէ, որ այստեղ եմ, մտածում էր կիւղմիլան իր ամուսնու մասին:

—Թող չիմանայ, հազիւ շունչ եմ առել, նա ինձ ուղղակի տանջում է իր զոլլոջուն պառաւած փաղաքշանքներով: Ես ուղում եմ ապրել, բաւական են այն փշրանքները, որ ես տալիս եմ այդ ծերուկին, կրկնեց նա մտքում այնպիսի թափով, որ քիչ էր մնում կանչեր:

Եւ կիւղմիլան յետ նայեց և ուրախացաւ, որ փողոցը ամայի էր—ոչ ոք չկար և չիմացաւ իր մտքերը:

Կիւղմիլան արագացրեց իր քայլերը, կարծես, փախչելիս լինէր:

Վերջապէս հեռուից երեաց քաղաքային պարտէզը, ամրողովին տերեաթափ եղած և մերկ ծառերով, որոնց վրայ

առաջանաւում էին դեռ ցրտաշունչ աշունքւայ քամու տակ այստեղ-այնտեղ թօշնած, գալիկացած մենաւոր տերեները, կարծես, վերջին ճիզը թափելիս մնալու, չը պ-կ-ելու առաջւան տեղից:

Կիւղմիլան մտաւ և եծ դարպասով պարտէզը և մի քանի խուլ և մոռացւած ճեմուղիներով անցաւ պարտէզի խորքերը, ուր այնտեղ նօսրացած ծառերի միջով երևում էր աշտարակի նման քարէ քայլացրած և ժամանակից մամուկալած զուրցակը: Նա աւելի արագացրեց իր քայլերը և ահա ճեմելիքի ծայրին տեսաւ մի պարոն, որը տեսնելով կիւղմիլային շտապով սկսեց մօտենալ: Վերջապէս երբ հաւասարւեց նըրա հետ, կիւղմիլան ուրախ և սրտաբաց առաջ անցնելով դարձաւ:

—Սաշինկա, թանգագինս, Սաշինկա, բարե, բաւական ուշացայ, սպասեցիր ինձ չէ:

—Կէս ժամ կը լինի, աւել չէ, որ այստեղ եմ: Բայց նայիր ինչ հրաշալի է այստեղ այս թափուտ և մենաւոր ծառերի մէջ: Լուման ես քամու վույոցը, ամեն ինչ համակւած լացով, բայց մենք չենք լաւ, այնպէս չէ, հոգիս, կիւղմիլոչկաս... Գնանք ահա այն զուրցակը այնտեղից շատ լաւ է դիտել շուրջը:

Սաշան անցաւ կուռ կիւղմիլայի հուժկու և հաստ թեւով և քայլերը ուղղեց դէպի աշտարակը:

—Աստած իմ, որքան այստեղ յիշատակարաններ կան, բացականչեց կիւղմիլան, երբ մտաւ սիւնանիստ զուրցակ-աշտարակը:

Եւ իրաւ բոլոր քարէ սիւների վրայ գրոտած էր ին զանազան անուններ և նկատողութիւններ:

—Ահա տես 1820 թւականը, կողքին էլ գրւած Սաշա

հ է . . . Էնոչկա: Խեղճերը, այժմ թերես նոցա ուկոռներն էլ չը կան, բայց նոցա սիրոյ արձանագրութիւնը Թուացել է մինչև այժմ:

—Ահա մի ուրիշը, տես Սաշինկա, որքան բարձր է գրւած, երևի մի բանի վրայ բարձրացել են ու գրել: Ապա, կարող ես կարդալ, ինչ է գրւած:

—Մենք սիրում ենք միմեանց և այստեղ ուխտ ենք կապում միմիայն միմեանց պատկանել,—կօլեա և կիդա, 1850 թ.

—Ե՞ս, սոքա էլ են ծերացել, գուցէ մեռել—անցել զընացել, տխուր ափսոսանքով վրայ բերեց կիւդմիլան: Այժմ պէտք է նոր սէր, նոր արձանագրութիւն . . .

—Ուզում ես, կիւդմիլա, ես էլ գրեմ, յաւերժացնեմ մեր անունները, դարձաւ Սաշան:

—Գրիր, գրիր, ինչու չէ:

—Ինչ կը ցանկանայիր:

—Գրիր, անծանօթին իմ սէրը, կիւդմիլա:

—Ո՞վ է այդ անծանօթը, հետաքրքիր է իմանալ:

—Այդ վերջը կիմանաս, գրիր այժմ:

Սաշան խոշոր տառերով գրեց կիւդմիլայի ուզածը, իսկ տակը աւելացրեց, ով որ էլ ինի այդ անծանօթը—ասենաերջանիկն է:

Կիւդմիլան կարդաց և ծիծաղեց, և դարձաւ—միթէ մոռացար մեր առաջին հանդիպումն փողոցում, յիշմւմ ես ինչպէս դու ինձ հետևում էիր և յետոյ ծանօթացանք և դու չասացիր քո ով լինելը—դու անծանօթ էիր ինձ համար, գէն գրիր տակը ամենանոր և ամենավերջին թիւը:

Սաշան գրեց և դարձաւ կիւդմիլային—դու միշտ ծիծաղում ես ինձ վրայ և երեխայի տեղ գնում:

—Ոչ, ոչ իմ պայինկաս, դու թէն շատ խելօքն ես,

բայց միամիտ մանուկ ես, ես քեզ դորա համար շատ եմ սիրում:

—Յիմարներն են, որ հաւատում են կանանց, դարձաւ երեխայի պէս զայրացած Սաշան:

—Նու, նու, յիմարիկս,—Սաշայի քթին մատի ծայրով խփելով՝ դարձաւ կիւդմիլան—ինչ բարկացկոտն ես եղել, ո այդ հայեացքդ, Սաշինկա, ինչ որ պողովատալին բան կայ մէջը, —գիտես քո աչքերը բազմաթիւ գոյներ են ստանում, նայելով քո հոգու տրամադրութեան, և ես առ այժմ տեսել եմ ութը գոյն, բայց այդ պողովատային հայեացքից ես վախին ևմ եմ, գէն խելօք կաց, տեղդ նստիր, դու գիտես որ ես համբուրել չեմ սիրում:

Սաշան այդ բոպէին վզովը փաթաթւելով կիւդմիլային ամուր համբուրեց շրթունքներից:

—Դու միշտ մի բան կը հնարես, դու ինձ չես սիրում:

—Ե՞ս, հոգիս, ես ինքս էլ չը գիտեմ, ում եմ սիրում ես սիրում եմ բոլորին-բոլորին, մանաւանդ քեզ նման անպիտաններին:

կիւդմիլան վերցրեց Սաշայի իրեն գրկած ձեռքը և արագ կերպով ծնկան վրայ գնելով դարձաւ՝

—Այ այդպէս, միշտ այդպէս պայինկա եղիր, - չարն ես, չարաճճին ես դու, Սաշինկա, հանգիստ չես նստիր: Դու գիտես, ես քեզ ասել եմ, որ ես քեզ սիրում եմ, բայց չեմ ցանկանում կապել քեզ ինձ հետ, իմ կեանքի հետ,—գնա, հոգիս, կապիր կեանքդ մէկի հետ, իոկ ես քեզ հեռուից կը սիրեմ:

—Դարձեալ, կիւդմիլկա, ոկսեցիր խաղալ ինձ հետ, դու ուզում ես յուսանատութիւնից ինքս ինձ կորցնեմ:

—Ինչու, դու երիտասարդ ես դեռ, ես արգէն իմ կեանքս առել եմ, թէպէտ այժմ էլ մի ծերուկի փայ եմ դա-

ուել, դա էլ երեկի իմ բաղդն է, այլ կերպ չէր կարող լինել, հոգիս, իսկ գաղտնի գաւաճանել իմ ծերուկին, ես չեմ կարող, պէտք է ամեն ինչ պարզ լինի: Եթէ ես մի օր գաւաճանեմ, ես պարզ ի պարզոյ կը գնամ և կասեմ:

—Ահա, Պետք Անտեմիչ, ես ուրիշին եմ սիրում, ուրիշի հետ եմ ապրում, թէն ես իրան վաղուց եմ ասել, որ իրան չեմ սիրում, այլ ամուսնացել եմ նորա հետ միմիայն հաշով, այդ նա շատ լաւ գիտէ, բայց մարդու հաւատը խաբութեամբ, խարդախութեամբ խախտել իմ ոյժերից վերէ, ես չեմ կարող:

—Միթէ նա քո այդ ճաղառ ստատսկի սավեանիկը չենասկանում որ դու և նա մի զարհուրելի հակասութիւն էք—դու առողջ, երիտասարդ, փարթամ և ապրելու անհուն տենչով բռնւած, իսկ նա մի աւերակ,

—Թող, սիրելիս, ես գանամ այդ աւերակի բուն, և արտասունքի կաթիլները լցւեցին կիւղմիլայի խոշոր, արտայայտիչ աջքերը: —Միթէ դու չես տեսել, ինչ պոյէզիս է, երբ բուն մենաւոր ամայութեան մէջ նստած մի խարխած պատի, աւերակի զլխին վույ-վույ է անում: Ես էլ եմ վույ-վույում, հոգիս, իմ բաղդիս ճակատին նստած:

—Եթէ դու ինձ այդպէս հոգինան անես, ես բոլորովին կը մեկնեմ այս տեղից: Ես այդպէս չեմ ուզում, չեմ ուզում, լսում ես, —ամեն ինչ կամ ոչինչ, մի տեսակ բեկւած ձայնով ասաց Սաշան և նորից փաթաթւեց կիւղմիլային:

—Նու, նու, մանուկս, Սաշինկա, լաց մի լինիլ լաց մի լինիլ, տղամարդ եղիր, Բնչ ես քիթդ կախել—ահա ես ամբողջովին հոգով և սրտով քոնն եմ, էլ Բնչ ես ուզում սորանից աւել, այս ասելով կիւղմիլան գրկեց Սաշային և գլուխը ուսերին դնելով, համբուրեց:

—Համբուրիր, համբուրիր, դուն էլ, Սաշինկա, ահա

այստեղ, նա դէմ արաւ իր փղոսկրեայ լիքը վիզը: Սաշան անվերջ և ջերմու տենդով սկսեց համբուրել կիւղմիլայի վիզը, այտերը, աչքերը և հիւթալի շրթունքները:

—Այդպէս ամեն ինչը լաւ է, բայց դարձեալ իմը չես, կիւղմիլա, զու համբուրում ես հետո և գիշերը կը գնաս դարձեալ քո ծերուկիդ գիրկը:

կիւղմիլան ցնցւեց:

—Ի՞նչ անեմ, Սաշինկա, կեանքը ինքն է մեզ ամենիս հրում դէպի մեր անելիքը: Ո՞ւր է զու էլ իթէ կարողանայիր տալ ինձ այն կեանքի ապահովութեան կէսը գոնէ, ես քոնը կը լինէի, իսկ մենք միասին միայն պիտի տառապենք մեր չքաւորութեան մէջ: Թող որ այդպէս էլ մենք սիւրենք միմեանց, գուրգուրանք միմեանց մեր սրտերում:

—Դա անկարելի է, կիւղմիլա, բարկացած վրայ բերեց Սաշան, երբ ես մտածում եմ մեմ ես զու պատկանում, ես ինքս ինձ կորցնում եմ: Ես կրկնում եմ՝ կամ ամեն ինչ կամ ոչինչ:

—Սաշան վեր թռաւ տեղից և բայլերը, կարծես, ուղղեց գուրս:

—Այ դու, անպիտան, էլի եղնիկի նման վեր թռար: Զեմ կարող, չեմ կարող, չեմ . . .

—Նու եթէ չես կարող, —մնաս բարով, ես շուտով կը թողնեմ պաշտօնս և կը մեկնեմ Մոսկաւ: Աստած մի բան կը տայ:

կիւղմիլան մտածմունքի մէջ ընկաւ և տխրութեան ստերը անցաւ նորա երեսովը, բայց ինքն իրեն հաւաքեց և դարձաւ:

—Ի՞նչպէս գիտես, Սաշինկա, բայց ես քեզ կը սիրեմ միշտ և քեզ չեմ մոռանայ, սրտումս կը փայփայեմ: Աստած քեզ հետ:

Լիւդմիլայի խօսքերից յուսահատական ստւեր իջաւ Սաշայի դէմքին: Նա մտածմունքի մէջ ընկաւ, թախիծը կրծում էր նորա ներսը, թանգագին կնոջից բաժանւելու ուրականը ծանր կերպով նստեց նորա սրտին:

—Այդպէս ուրեմն, այդ է քո սէրդ, թող այդպէս էլ լինի, շուտավ կը գնամ և դու այլ ևս ինձ չես տեսնիլ—մը նաս բարով կասես:

Ի՞նչ անհմ, Սաշինկա, կը գնաս, բայց սրտումս կապրես դու ընդմիշտ: Դէս, գնանք, այժմ, արդէն ժամանակ է, պարտէզում մարդիկ են երեսում, լաւ չէ, կարող է ծանօթ պատահել:

—Դու, կարծես, ամեն ինչից վախենալ ես սկսել, դիրք ես պահպանում, չը լինի թէ հասարակական կարծիքը խօսէ վրադ:

—Օ՛, չէ Սաշինկա, չեմ ցանկանում գոնէ արտաքին անդորրութիւնս վրդովել, բաւական է և իմ ներքին հոգեկան խոռվութիւնս:

Մութը ստւերը անցաւ լիւդմիլայի երեսովը, երեսում էր, որ երբեմն ծանր բոպէներ էին գալիս նորա վրայ:

Նոքա վեր կացան և կամաց-կամաց անցան ծառուղիներով դէպի պարտէզի դարպասը: Փողոցները մնացել էին նոյն ամայի վիճակում, երբեմն հատ-հատ երեսում էին մարդիկ, օտար, անծանօթ դէմքով: Գաւառական քաղաքների կնիքն էր դա—խուլ մենութիւն, մանաւանդ անձրևային, մոայլ օրերին:

Անցան մի նեղ ու ամայի փողոց: Լիւդմիլան մտաւ Սաշայի թեսով և ամուր խտած արագացրեց քայլերը:

Պատուհանից նայող կանայք այժմ, տեսնելսվ լիւդմիլային մի տղամարդու հետ, աւելի ամբացան իրենց ենթադրութիւնների մէջ: Լիւդմիլան իր խիտ քողի տակ աւելի խորհրդաւոր էր երեսում:

Սաշան գլխիկոր և տխուր էր: —Նու, նու, Սաշինկա, չը տխրես, եթէ գնալու լինես կը տեսնւեմնք:

—Ոչ, ոչ, արդէն աւելորդ է տեսնւելը: —Չէ, չէ, հոգիս, վաղը եկ դարձեալ պարտէզը երեկոյեան ութին: Կը գաս, Սաշինկա, չէ:

—Չը գիտեմ, բարկացոտ նօթերով պատասխանեց Սաշան, կարելի է վաղը այդ ժամանակ արդէն ճանապարհւած լինեմ:

—Ինչպէս կուզես, դարձեալ խստութեամբ դարձաւ Լիւդմիլան:

Սաշան մոայլեց:

Արդէն բաւական մօտեցել էին քաղաքի կենդրոնին, վտանգը աւելի և աւելի շատանում էր, Լիւդմիլան չէր ցանկանում, որ իրեն տեսնեն Սաշայի հետ, —մնաս բարով ասեց և ջերմ ու սիրալիք ժպիտը երեսին ուղիղ նայեց աչքերին, կարծես, ասելիս լինէր—չես մեկնիլ ինձ չը տեսած: Ապա փողոցի անկիւնից ձկւելու ժամանակ յետ դարձաւ և նորից նայեց յուսալիր և տարփոտ ժպիտով:

Սաշան մի առ ժամանակ կանգնած, քարացած մնաց տեղը և ապա ինքն իրան, —նա ինձ սիրում է—ասեց մը բում և հեռացաւ իրեն անծանօթ ու նոր փողոցներով:

X

Սեղանատան ժամացոյցը զարկեց ժամը թ.ը: Լիւդմիլան սննդարար և փառաւոր ճաշից յետոյ պառկած տաճկական գահաւորակի վրայ և աշքերը յառած դէպի փակ պատուհանները, մտածում էր:

Եւ այսպէս անվերջ—կեր, խմիր, հախւելիր և ման արի,—հարսաւութիւնն էլ ինձ բաւարարութիւն չը տւեց, տը խուր է, ախուր, և եթէ այդ Սաշան էլ չը լինի, իմ կեանքումն չէր լինի մի փայլուն կէտ, արեն մի ճառագայթ, մը

տածում էր նա: Հիմա նա էլ վշտացել է ինձանից և կարող է պատահել թողնի քսդաքը և վերագառնայ հայրենիք, և ահա այն ժամանակ մնացիր այդ ճաղատ և թափւած մազերով ծերուկի մօտ և զո՞ւ դարձիր նորա անվերջ և զգւանք բերող փաղաքանքներին: Բայց ինչո՞ւ վշտացնել այդ առողջ և սիրելի երիտասարդին, ինչո՞ւ չը տարւել նորա ջերմ և անկեղծ սիրով, ինչ եմ կորցնում ես կամ այն ծերուկը, որ իր զրամով ինձ սարուկ է դարձրել և բաւական չէ, դեռ այդ զրամով իւր բարոյականութիւնն էլ է վզիս փաթաթել ու կապել: Ինչ կը նշանակէ հաւատարիմ մնալ ամուսնուն, չը դաւաճանել նորան, երբ նա իր սպառւած կեանքով, դալիս է քո առողջ և առատաբուղիս կեանքի ակները ցամաքացնելու: Զէ, չէ, դա է անբարոյականութիւնը,—և ոչ թէ իմ սէրը դէպի Սաշան: Մարմի, օրգանիզմի պահանջը բնութեան պահանջն է, իսկ բնութիւնը անարատ է, բարոյեական է: Բնութիւնը ինքը մորախն է: Ես չեմ ցանկանում հպատակել մարդկանց, մանաւանդ այդպիսի ճաղատած և թափւած տերեներով կեանքի մորալին: Առողջ կեանքի մորալը այլ բան է ասում և ես գնալու եմ նորա յետելից: Իմ Սաշինկա, քո ամեն մի ֆեբրադ ինձանով է շնչում և ես յանցանք կը գործեմ, քո սիրուն չը պատասխանելով:

Ահա այսպիսի մտածմունքներով կիւղմիլան ձգեց և ճապկաւեց իր փարթամ ու լիքը մարմնով. աւելի ըելիեփ և գրգորիչ տեսք տալով իրան սենեակի կիսամթութեան մէջ: Կիւղմիլայի մի ոտը վայր սողաց և բացւելով ծնկնից վեր գունաւոր և սպիտակ շղարշով կարւած ներքնազգեստի տա կից երևաց նորա փափուկ և սպիտակ մարմինը:

Ներս մտաւ Սալարեանը և նորա մանր ու մկան աչքերը դիպան կիւղմիլայի մերկացած ապդրին: Անհանգիստ կրակը փայլեց և պսպղաց նորա ջերմուտ տենդայնութեամբ շարժւող աչքերի մէջ:

Նա աննկատելի մօտեցաւ կիւղմիլային և ծունկի զա-

լով փափուկ խալիչայի վրայ, շրթունքները մօտեցրեց բաց ծնկանը:

Լիւղմիլան ցնցւեց և զգւանքի զգացմունքը անցաւ նորա ամբողջ մարմնով մէկ, կարծես, մի սառը խլէզ անցաւ նորա բաց ծնկան վրայով վեր, — նա կայծակի արագութեամբ վեր թռաւ տեղից և նստեց գահաւորակի վրայ և դարձաւ վավաշոտ ծերուկին:

Թողէք գոնէ ցերէկը հանգստանսամ, գնացէք ձեր սինեակը և հանգստացէք:

— Զէ, սիրելիս, անգինս, ես այնպէս, ես կը գնամ, պառկիր հանգստացիր, ներիր ինձ, ես չը կարողացայ, չը համբերեցի . . .

Այս ասելով, յանցաւորի նման Սալարեանը յետ—յետ գնալով, հեռացաւ իր սենեակը:

Լիւղմիլան նայելով նորա յետելից, նորա ճաղատ և տեղ տեղ դեղին, գունատւած պուտերով գլուխը, երեսը ծոմոեց և ինստիկտարար „Փի“ ասելով, դարձաւ դէպի պատը և պառկեց:

— Քեզ, սիրելիս, քեզ եմ կարօտ — և նորա ներսը և նորա հուժկու և առողջ մարմնովը անցաւ մի տարփոտ, գըրգուիչ և անգուսայ զգացմունք, կարծես, նորա մարմինի իւրաքանչիւր մասնիկը շարժւում, տարւում և ուզում էր ոլանալ դէպի առողջ և երիտասարդ Սաշան:

— Դու իրաւունք ունես ինձ՝ առնելու, — քո երիտասարդութիւնդ քո իրաւունքը է, ասում էր նա իր մտքում, և ոչ ոքի ես և զու հաշիւ տալու չինք, ես քոնն եմ, իսկ զու իմս: Մեր մարմինների անզուսպ ցանկութիւնը մեր արդարացումն է, ասում էր նա իր մտքում դարձեալ:

Իրաքանչիւր մի յանցաւոր միտք. Լիւղմիլայի ուզեցում իր արդարացումն էր ուզում գտնել:

Լիւղմիլան պառկած էր աղեղի ձեռվ, նորա լիքը և գեր ազդրերը և օվալ տօրսը զեղեցիկ կորութեամբ և ուռուցիկ գծերով դուրս էին եկել և յուզիչ պարզութեամբ

գծել նորա մարմնի գեղեցիկ ձևերը թափանցիկ և բարակ զգեստի տակից:

Սալարեանը դրան արանքից նայում էր և հրճում էր նորա մարմնի առատութեամբ և քարշող գեղեցկութեամբ, մոռանալով այն վիրաւորանքը, որ Լիւդմիլան հասցրեց նորան, ըշելով նորան իրա մօտից:

Սալարեանը մնաց երկար կանգնած, բուռն ցանկութիւնը յուզում էր նորա մաշւած օրգանիզմը, նա ուզում էր բանալ դուռը և նորից մօտենալ Լիւդմիլային, բայց չէր համարձակում, վախո, որ կարող է վշտացնել, նոյն իսկ բարկացնել գեղեցիկ կնոջը, նորան յետ էր կանգնեցնում:

Սալարեանը գնահատում էր իր յարաբերութիւնները Լիւդմիլայի հետ և ամեն կերպ աշխատում էր չը փչացնել նորան և արտաքին հարթութիւն պահպանել իր յարաբերութիւնների մէջ:

Բայց ահա կայծակի արագութեամբ նորա միջով անցաւ մի ժիտք, որ Լիւդմիլան կարող է իրեն անհաւատարիմ գտնել և սիրել ուրիշին: Նորա երեակայութեան մէջ վառ պատկերացաւ Լիւդմիլայի առողջ, լիքը իրանը թատրոնում պատահած երիտասարդի զրկում, տարփոտ համբոյներով ծածկելիս նորա բաց մարմար կուրծքը և հիթալի պոչները: Իսկ Լիւդմիլան, —նա նոյնպէս համբուրում է, գգում նորան, այդ առողջ երիտասարդին:

Սալարեանի ամբողջ մարմնը փշաքաղեց և նա իր բնեոած հայեացքը Լիւդմիլայի վրայից դարձրեց սենեակի միւս կողմը, հանդիպելով հայեացքով պատի մօտ ամբոցի նման կանգնած պողովատէ կասսային:

Սալարեանի հայեացքը պարզեց և թեթև ժպիաը անցաւ նորա գէմքով:

Իսկոյն նա մօտեցաւ կասսային և ամուր զնգոցով. կարծես, մէկին ուզելով խայթիլ, բացեց կասսայի հաստ և

ծանր դուռը և միջից սկսեց դուրս հանել փաթեթներով արժէքաթղթեր և թղթադրամներ և թանգագին իրեր:

Մի ինչ որ ուրախ և յուսատու ստեղներ նորից անցան նորա գէմքով:

Նա, կարծես, ասելիս լինէր իրեն—սոքա դեռ երկար, մինչև իմ կեանքիս վերջը կապանովեն այժմեան իմ հարուստ և փարթամ կեանքը և Լիւդմիլան էլ կը մնայ մօտս, ով կը տայ նորան այս ամենը,—եթէ ոչ սոքա, և նա ինքնարաւական կերպով վերցրեց թղթադրամների փաթեթները և, կարծես, շոյելով ու գուրգուրալով նորից զգութութամբ դրեց իրենց առաջւան տեղը, նոյնպէս միւս արժէքաթղթերը և թանգագին իրերը:

Սալարեանը յետ արեց հաստ և մասսիւ պողովատէ կասսայի դուռը և նորից ամուր զնգոցով կողպեց, և ինքը դեռ մի քանի վայրկեան մնաց կանգնած քառակուսի երկաթէ սիւնի առաջը:

Սալարեանի գէմքը ընդունեց լուրջ և հանգիստ արտայայտութիւն, կարծես, նորա բոլոր յօյսերը և բոլոր ներսը կասկածող և վարանող մտքերը հանգստացան այդ պողովատէ հաստակուո փոքրիկ ամբոցի վրայ:

Սալարեանը ինստիկտաբար տարաւ ձեռքը գէպի կասսան և ոսկրացած ձեռքով, կարծես, շոյեց կասսայի բրոնզէ ինկրուստացիաները:

Երկաթի սառնութիւնը անցաւ նորա մարմնով և նա սեղմեց կուչ եկաւ, ու վարանող, ու անհանգիստ բայլերով նորից անցաւ գէպի կիսաբաց դուռը:

Սալարեանը մի անգամ էլ նայեց անհոգ ու յուզիչ տեսքով պառկած կնոջը, դարձաւ ետ և նայեց նորից վայրեան մի պողովատէ կասսային, ապա ամուր, հաստատ քայլերով անցաւ սենեակի միւս կողմը և երազկոտ ցնորդնե-

բավ պատկեց հարուստ և քաղցր յիշողոթիւններ դարթեց-
նող գահաւորակի վրայ:

Լիւզմիլան սեղանատանը դեռ կիսաքուն գրութեան
մէջ պառկած էր իր սպիտակ, թափանցիկ շորի մէջ, որից
աւելի պայծառ և աւելի ուժեղ դուրս էին եկիլ նորա ձկուն
ու հարուստ մարմին ուսուցիկ գեղեցկութիւնները: Նա շարժ
ւեց, ճապիւեց և թեկը պարզեց առաջ, կարծես, ցանկանա-
լով ձգւել ամբողջ իր կեանքով լի մարմիովը դէպի աղա-
տութիւն, աղմուկ և շարժում՝ երեալու համար տղամարդ-
կանց տաք ու գրգռող հայեացքներին:

Պատուհանից ծածկւած փեղկերի ճեղքից անցնում էր
արեգակի նեղ ոսկէգոյն ճառագայթը և կարմրագոյն փոշու
սիւնեակը ուրախ զողղողում և պայուտ էր գալիս սենեակի
մթութեան մէջ: Ոսկի շերտը շեշտակի ընկած էր սեղանի
վրայ և պայծառ կերպով վառում էր սեղանի վրայ դեռ մը-
նացած շամպայնի շիշի կողքին պապուն աստղիկը:

Խորհրդաւոր, խաղաղ էր ներսը՝ սենեակում, խորհր-
դաւոր և խաղաղ էր և դուրսը՝ եր կիրը փաթաթւած էր երե-
կոյեան փափուկ և կապոյտ վշտով և դարձել էր դորանից
աւելի գեղեցիկ և աւելի խորհրդաւոր, ինչպէս մտորող կոյս:

Արեւ իր վերջին հեքի մէջ էր և երկրի վրայ իջնում
էին մութը և երերուն ստւերներ, համակելով ամեն ինչը
մի տեսակ թափծու աշնանային վշտով, վարանուս սպասո-
ղականութեամբ:

—Ի՞նչ էլ լինի, ես պիտի զնամ այսօր, Սաշան մեղք
է, նա ինձ կը սպասէ, մտածում էր Լիւզմիլան և նայում իր
փաթամ և ուսուցիկ ազդրերին և հնացող բարձր կըծքին:
Սաշան—կրկին անցաւ նորա մտքովը—Օ՛ ինչպէս խելակո-
րոյս կերպով նա կը փաթաթւէր և կը գրկէր ինձ և համ-
բոյրներով կը ծածկեր ինձ,

Լիւզմիլան վեր կացաւ տեղից, ճապկաւեց, Ճեսքերով
շփեց դէպի վեր երեսը և հաւաքեց իր թափթփած մազերը:

Նա մօտեցաւ կիսաբաց գուանը և տիսաւ ինչպէս Սա-
լարեանը դիակի նման մէջքի վրայ ընկած, քնած էր, նորա
ճաղատ գլուխը խորը ընկել էր բարձի մէջ երկու կողմից
ցցւած ականջների ծայրերով, —ածիւած կզակը կուցել էր և
կողքի ընկել ու կախւել, կաղմելով բերանը մի եռանկիւնի
ճեղքաւծք սեացած ատամներով:

—Օ՛, Աստւած իմ, զգւելի է անցաւ Լիւզմիլայի մըտ-
քով, և իսկոյն աչքերը փակեց և շտապ հեռացաւ իր սեն-
եակը:

Նա արագ և շտապ կարգի բերեց իր մազերը, հագաւ
վերնազգեստը և գլխարկը և, կարծես, հրդեհով բռնւած
տնից, գուրս վաղեց, թուաւ:

Դուրսը աղախնուն ասեց, որ իան թէյի չսպասեն, ին-
քը ուշ է գալու:

Դրսի թարմ և երեկոյեան զով օդը թարմացրեց և աշ-
խոյժացրեց Լիւզմիլային և նա ուրախ ու թոչկոտող քայլե-
րով ուղղեց խուլ փողոցներով դէպի քաղաքային պարտէ-
զը, ուր ժամադիր էր եղել Սաշայի հետ:

XI

Լիւզմիլան մեզ ծանօթ պարտէզի բարէ աշտարակումն
էր, երեկոյեան վերջալոյսը իր վերջին հեքի մէջ էր, Սա-
շան դեռ չէր երեւմ, անհանգստացնում էր այդ նորան: Նա
շան գեռ չէր երեւմ, անհանգստացնում միջով և ամայի աշ-
շարունակ նայում էր հեռուն ծառուղու միջով և ամայի աշ-
շարունակ մերկ կանչող ծառերի միջոց ոչ ոք չէր երեւում,
բացի հատ հատ սիրահարւած զոյզերի, որոնք ստւերների
մման երեւում և անյայտանում էին հեռաւոր ծառերի մէջ:

Լիւդմիլան սրտատրով սպասում էր Սաշային: Նա ամբողջովին փայլի և շարժողութեան մէջ էր, և, կարծես, պոկելիս լինէր դէպի առաջ, դէպի մի անծանօթ, չը ճաշկւած երջանկութիւն, որ տալու էր նորան կանչող, գրաւող կեանքը: Տանը խեղդող և ճնշող մթնոլորդից զուրս պոկելով, նա առագաստի նման արագ և անհաշիւ գնում էր ճաշկատագրի փչող քամով, հեռուն, իր կեանքի հորիզոնի վրայ տեսնելով իրեն յափշտակող, թարթող մի փայլուն կէտ, որը լուսոյ ազօտ ճառագայթներով բացւում էր նորա առաջը մի անծանօթ, բայց երազկոտ աշխարհ:—Սաշան էր այդ աշխարհը իր մտորոտ, երիտասարդ և անհաշիւ սիրոյ զգացմունքներով,—մի հոգի, որը վճիտ առւի նման խփում էր իր սառը հոգին Լիւդմիլայի թօշնած ու խամրած կեանքին, տալով նորան անվերջ յոյսեր, մի անծանօթ, մի սպասող երջանկութեան հեռանկար, որի նախազգացումի տակ ամրող նորա առողջ, երիտասարդ և հարուստ մարմինը ըլլուած հերթ մէջ դողում էր տենդոտ սպասողութեամբ, և ոչ մի մութ գիծ չը կար նորա մէջ:—ամեն ինչ պայծառ էր և փոթորկոտ:

Սաշան գեռ չէր երկում, անհանգիստ յուզումը անցաւ Լիւդմիլայի ներսը:

—Չը լինի թէ բարկացել է ինձանից, չը լինի թէ յանկարծ մեկնած լինի, այդպիսի հազար ու մի միաք անցնում էր Լիւդմիլայի անհանգիստ ուղեղով:

Անցան դարձեալ նորա համար յաւիտենականութեան պէս երկար ըովէներ, ամայի ծառուղիով և մերկ ծառերի միջով ոչ որ չէր երեսում, անյայտացան նոյնիսկ մի-երկու կասկածելի դոյգերը, շուրջը մենաւոր էր և խաղաղ, միայն երբեմն թեթև քամին լսելի էր դարձնում գեղնած, չորացած աշնանային տերեների խշիչցը:

Մանը թախիծը պատեց Լիւդմիլային:

Նա չը կար . . .

Ցուսահատ ստերները իջան և թուխպ ամպի նման պատեցին ու ճնշեցին Լիւդմիլայի մտքերը:

Բայց յանկարծ ինչ որ սկին աւեց հեռաւոր ծառերի միջով՝ Լիւդմիլան յառած աչքերով հայեացքը ուղղեց դէպի սկին տւող կէտը:

Նա է, նա է . . . ակամայթուաւ նորա բերանից և սիրաւը սկսեց ուժդին բաբախել: Երբ բաւական մօտեցաւ անծանօթը, Լիւդմիլան պարզ ճանաչեց Սաշային:

Սաշինկան . . . նորից թուաւ նորա բերանից:

Սաշան շտապով մօտեցաւ ժպիտը երեսին կարօտագին ուզող հայեացքը թուաւ աշտարակի սանդուղքների վրայով:

Լիւդմիլան առաջ ընկաւ լարւած մարմնի մի անտա նելի ցանկութեամբ և համարեա ընկաւ Սաշայի կրծքին: Երկու ուժեղ և տարփոտ թեեր գրկեցին նորա երիտասարդ մկուն մարմինը և տաք շրթունքները սահելով սիրող կոնչ թաւշեայ այտերով, գտան նորա շրթունքները և փակեցին նոցա կատաղի համբոյըներով:

Լիւդմիլան մաքառում էր նորա տարփոտ գրկում, ուզելով պոկւել, դուրս պըճնել նորա ամուր թեերից, բայց նա մէկ ձեռքով բռնելով նորա փափուկ, աղւամազով ծածկած ծոծրակը, տանջող ուժով սեղմեց նորա շրթունքները իրեններին ոյնպէս, որ զգաց նորա սառը և թաց ատամեները: Լիւդմիլան խեղամահ էր լինում խելակորոյս եղած Սաշայի սեղմած ձեռքերի մէջ, յուսահատ կերպով նա յետ բաշւեց և պոկւեց, յետ ցատկելով դէպի աշտարակի ցած ու լայն պատը:

—Ոչ, ոչ, Սաշինկա, հարկաւոր չէ այդ..

Սաշան ուշ չը զարձրեց նորա աղերսող խօսքերին նորից ուղղակի յարձակւեց Լիւդմիլայի վրայ և նորից փաթաթւելով նորա իրանովը, ամուր սեղմեց նորան և ապա արագ-արագ քակելով նորա կոճակները, կատաղի համբոյըներով ծածկեց նորա առատ և սպիտակ կուրծքը:

—Սաշինկա, հազիւ լսելի ձայնով Լիւդմիլան ընկած նստարանի վրայ և յոդնած ու կիսափիտակցութեան մէտարփոտ մրմունջով գրկեց Սաշայի զլուխը թոյլ ու ջերմուտ համբոյըներով ծածկելով նորա շրթունքները:

Լիւդմիլան նորից փորձեց լնդդիմանալ, բայց երբ մթութեան մէջ, աստղերի աղօտ լոյսի տակ տեսաւ- Սաշայի վառող, հրակայծ արձակող հրաշալի աչքերը, սիրելի ճակատը և փափուկ ու մութ գոյնի մազերը, երբ լսեց նորա յուզող ծանօթ ձայնը, Լիւդմիլան յանկարծ թուլացաւ և կպաւ նորան ամբողջ մարմնով, կարծես, ուզելով ասել,—Այլ ևս չեմ կարող այդպէս . . .

Սաշան ամուր և ուժեղ ձեռքերով դեռ բոնած ունէր թանկազին կնոջ իրանը, երբ նա թուլացած, ինչպէս խուրձ պառկեցաւ նստարանի վրայ, յուզիչ մերկութեամբ բաց անելով հոլանի ու սպիտակ ոտները ծնկներից վեր ծածկւած ներքնազգեստի սպիտակ շղարջներով:

Սաշայի աչքերը մթնեցին, նա հազիւ լսեց միայն Լիւդմիլայի վերջին մրմունջը՝ «Անզինս» և մթութեան և պարտէզի ամայութեան մէջ մոռանալով ինքն իրան, գրկեց մերկացած, փարթամ և փոթորկող անամօթութեամբ բացւած կնոջ իրանը աւելի ամուր, աւելի խիտ . . .

Ուշ գիշեր էր, Լիւդմիլան, ինչպէս ձեռնասուն վագրունի իր խոշոր բայց ճկուն և շարժուն կազմւածքով նըստած էր Սաշայի ծնկանը և թիերը ծգած նրա ուսերին անդադար կրկնում էր:

—Ի՞նչո՞ւ, Սաշինկա, ես և դու յաւիտեան կապւեցանք...

Երանաւէտ մրմունջները դեռ երկար լսւում էին խաղաղ աշնանային զիշերին երկուսի բերանից և գնում տարածում զերմ շշուկներով ամայի պարտէզի ծառերի խորհրդաւոր մենութեան մէջ, և ոչ ոք չը զիտէր, որ այդ հինաւուց բարէ աշտարակի մէջ կուռմ, կոփուում և ամրանում էր մի նոր կեանք, նւազւում էր մի նոր ջութակ, որ բերում էր երկուսի համար տանջալից, քայց և լի յոյսերով և սպասելիթներով մի երջանկութիւն . . .



Օտար լեզուվ բարգմանի ցանկացողները—դիմեն հեղինակին:
Պահանջութակ—*Тифлисъ, Вознесенская, 45. Кара-Дарвишъ.*

ԳԻՆԸ ՄՅՈՒ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0341436

35581